

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ռուսաստան-Արեւմուտք Առճակատումը Եւ Հայաստանը

Ուքրանիոյ շուրջ ամիսներէ ի վեր ստեղծուած տագնապը եւ Ռուսաստան-Արեւմուտք առճակատման հեռանկարը սկսած է մեղմացման նշաններ ցոյց տալ: Վերջին օրերուն Ռուսաստան յայտարարեց որ, զօրավարութիւնները աւարտած են եւ իրենց զօրքերը սկսած են հեռանալ Ուքրանիոյ հետ սահմանային շրջաններէն, ինչպէս նաեւ ռազմական ստորաբաժանումներ դուրս կու գան Պեւառուսէն:

Միացեալ Նահանգներու Գախազահ ճօ Պայտըն իր կարգին յայտարարեց որ, պատրաստ է շարունակելու դիւանագիտական բանակցութիւնները բոլոր երկիրներու անվտանգութիւնը երաշխաւորելու նպատակով:

Այս զարգացումները յաջորդեցին լարուած շփումներուն, որոնք վերջին օրերուն տեղի ունեցան մէկ կողմէ Գախազահ Փութինի եւ միւս կողմէ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական շարք մը երկիրներու ղեկավարներուն միջեւ: Թէեւ Մոսկուա առաջին օրէն կը յայտարարէր թէ նպատակ չունի Ուքրանիոյ վրայ յարձակում գործելու, սակայն միւս կողմէ Արեւմուտքէն կը պահանջէր յստակ խոստում, որ Ուքրանիա մաս պիտի չկազմէ ՆԱԹՕ-ի ռազմական դաշինքին, այդ քայլը նկատելով սպառնալիք Ռուսաստանի ապահովութեան: Արեւմուտքը սակայն կը մերժէ նման հաւաստիացումով հանդէս գալ, բաւարարուելով միայն այն դիրքորոշմամբ, որ Ուքրանիոյ մուտքը ռազմական այդ դաշինքէն ներս առայժմ օրակարգի վրայ չէ:

Ռուսական կողմը կը մեղադրէ Միացեալ Նահանգները, ըսելով թէ ան կը փորձէ իրավիճակը բորբոքել՝ մօտալուտ յարձակման մասին ապատեղեկութիւններ տարածելով: Շատեր, որոնց շարքին Գախազահ Պայտընի վարչակազմը կը շարժի դասեր քաղելով 2014-ի փորձէն ու կը վարէ Գա-

## Փաշինեան Եւ Քլար Բննարկած Են Եւրոպական Միութեան 2,6 Միլիար Եւրոյի Ներդրումային Փաթեթը

Ժողովրդավարական բարեփոխումներու օրակարգը կը շարունակէ մնալ Հայաստանի կառավարութեան առաջնահերթութիւններու շարքին, եւ ՀՀ իշխանութիւններուն նուիրուածութիւնը ժողովրդավարական բարեփոխումներու գործընթացին անբեկանելի է: Այս մասին յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ընդունելով Հարաւային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Թոյվօ Քլարը՝ Հայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, դեսպան Անտրէա Վիքթորինի ուղեկցութեամբ:

Վարչապետը կարեւորած է Հայաստան-Եւրոպական Միութիւն յարաբերութիւններու շարունակական զարգացումը եւ այդ ուղղութեամբ համատեղ ջանքերը:

Զրուցակիցները քննարկած են ԵՄ-ի կողմէ Հայաստանին համար նախատեսուած 2,6 միլիար Եւրոյի ներդրումային փաթեթի իրականացման ուղղութեամբ աշխատանքներու ընթացքին վերաբերող հարցեր: Այդ ծիրին մէջ, առանձնակի կարեւորուած է Միւլիքի մարզին մէջ 80 միլիոն Եւրոյի փաթեթի արդիւնաւէտ կեանքի կոչումը:



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Թոյվօ Քլարը

Վարչապետը բարձր գնահատած է Եւրոպական Խորհուրդի նախագահ Շաէլ Միշէլի ջանքերը՝ տարածաշրջանին մէջ փոխըմբռնման ու կայունութեան ամրապնդման ուղղութեամբ:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է 44-օրեայ պատերազմին հետեւանքով Հարաւային Կովկասի մէջ ստեղծուած

իրավիճակին, հաշտարկչական սահմանին իրավիճակի լիցքաթափման ու կայունութեան ապահովման ուղղուած քայլերուն: Մասնաւորապէս, միտքեր փոխանակուած են Սոչիի մէջ Ռուսաստանի նախագահին, Պրիւքսէլի մէջ Եւրոպական Խորհուրդի նախագահին

Շար.ը էջ 6

## Հայաստան Պիտի Շարունակէ Իր Զանքերը՝ Ուղղուած Հայոց Ցեղասպանութեան Գնահանման. Արարատ Միրզոյեան

«Հայաստանի կառավարութիւնը հետեւողականօրէն շարունակուած է իրականացնել բոլոր այն քայլերը, որոնք վերաբերեալ յանձնառութիւն է ստացել կառավարութեան ծրագրով: Այդ ծրագրում յստակ արձանագրուած է, որ ՀՀ-ն շարունակելու է իր ջանքերը՝ ուղղուած ինչպէս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, այնպէս էլ ընդհանրապէս աշխարհում մարդկութեան դէմ այդ յանցագործութեան հետագայ դրսեւորումների կանխմանը», ԱԺ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ ըսաւ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Ըստ անոր՝ որպէս ապացոյց կրնայ ըսել ՀՀ վերջին նախաձեռնութիւնը՝ Մարդու իրաւունքներու Խորհուրդին մէջ հերթական անգամ ցեղասպանութիւններու կանխարգիլման բանաձեւի շրջանառութեան վերաբերեալ:

Արարատ Միրզոյեան անդրադարձաւ Հայաստանի ու Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչներու յաջորդ հանդիպման, որ տեղի պիտի ունենայ Փետրուար 24-ին, Վիեննայի մէջ:

«Այո՛, պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել յաջորդ հանդիպումը կազմակերպել Վիեննայում, եւ մենք յոյս ունենք, որ այս անգամ արդէն առարկայական



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

քննարկումներ կը սկսուեն երկու յատուկ ներկայացուցիչների միջեւ: Քննարկումներ՝ ուղղուած Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը եւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատմանը: Ուզում եմ մէկ անգամ էլ կրկնել՝ պաշտօնական Անգարայից այս մասին եկող ազդակները, ուղերձները, ակնարկները առաւելապէս դրական բնագիծի մէջ են: Եւ մեր ակնկալիքներն էլ այդպիսին են», ըսաւ Միրզոյեանը:

Շար.ը էջ 4

## Ըստ «Էքոնոմիսթի» Ժողովրդավարութեան Մակարդակով Հայաստանը Տարածաշրջանի Առաջատարն Է

2021 թուականին ժողովրդավարութեան մակարդակով Հայաստանը տարածաշրջանի առաջատար երկիրն է՝ աշխարհի 165 պետութիւններու շարքին գրաւելով 89-րդ տեղը, կը վկայէ լոնտոնեան «Էքոնոմիսթ» հանդէսի հետազօտական յաւելուածի տարեկան զեկոյցը:

«Էքոնոմիսթի» վերլուծաբանները պետութիւններու ժողովրդավարութեան մակարդակը շարք մը ոլորտներու մէջ կը գնահատեն 10 պալանոց սանդղակով եւ ընդհանուր յայտարարով Հայաստանը ստացած է 5, 49 միւլտիպլ, որ աւելի լաւ ցուցանիշ է քան տարածաշրջանի միւս բոլոր երկիրները՝ Վրաստանը, Թուրքիան, Ատրպէյճանը, Ռուսաստանը, Իրանը:

«Նախորդ տարուայ համեմատ Հայաստան բարելաւած է ցուցանիշները 0,14 պալով, ընդհանուր պալերը հասցնելով 5,49: Ինչպէս 2020-ին, այնպէս ալ 2021-ին գրաւած է նոյն 89-րդ տեղը, երկու աստիճան բարձր հարեւան

Շար.ը էջ 6

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՄ Դեսպանի Զրաժարականը Պահանջողները Ժամանակին Արդարացնում Էին Երեւանի Կեդրոնում Մարդկանց Գնդակահարութիւնը

ՎՈՎԱ ՅԱԿՈՐԵԱՆ

Ընդդիմութիւնը նախորդ օրը ակցիա իրականացրեց ԵՄ դեսպանատան դիմաց՝ Եւրոպական Միութիւնից պահանջելով արձագանքել Հայաստանում տեղի ունեցող իբր հակաժողովրդավարական գործընթացներին: Ակցիայի մասնակից ընդդիմադիրները ընդհուպ պահանջում էին դեսպանի հրաժարականը: Հիմնական առիթը Նոյեմբերի 9-ի գիշերը Կառավարութիւն, օդանավակայան եւ յատուկ պահանջող այլ տարածքներ մուտք գործած եւ խուլիզանական գործողութիւններին մասնակցած Նարեկ Մանթաշեանին կալանքից չազատելն էր, ինչը ակցիայի մասնակիցները համարում են քաղաքական հետապնդում:

Եւրոպական ժողովրդական կուսակցութեան անդամ, Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ Արմէն Աշոտեանն իր ելույթում վիրավորանքներով հանդէս եկաւ ԵՄ դեսպանի հասցէին եւ ասաց, որ Եւրոպական Միութիւնը վատ պրակտիկ է որդեգրել՝ Հայաստանում դեսպաններ է նշանակում այնպիսի անորակ դիւանագետներ, որոնք յետոյ թոշակի է ուղարկելու, Աշոտեանի լեքսիկոնով ասած՝ «սպիտակ է անելու»: Աշոտեանը կարծիք չափանց նաեւ,

որ որեւէ մէկը այդքան վնաս չի տուել համամարդկային եւ եւրոպական արժէքներին Հայաստանում, որքան դեսպան Անդրէայ Վիկտորինը:

«Քաղբանտարկեալները» համար պայքարող այս Արմէն Աշոտեանը այն նոյն Արմէն Աշոտեանն է, ով «Մարտի 1-ի» կապակցութեամբ ԱԺ 4 պատգամաւորներին լիազօրութիւններից զրկելու առաջամարտիկներից էր: Յետագայում նոյն ձեւով գնահատականներ էր տալիս, չէր ընդունում 2008 թուականի ընտրութիւնների խախտումներով անցկացուած լինելու հանգամանքը եւ պնդում էր, որ Հայաստանում քաղբանտարկեալներ չկան:

Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ, խորհրդարանական «Պատիւ Ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Մամիջանեանն էլ ելույթի իր տեքստի վերջում «ամօթ» վանկարկումներն ուղղեց դեսպանի հասցէին:

Բողոքի ակցիային մասնակցում եւ ելույթներ էին ունենում նաեւ Ռոբերտ Քոչարեանի աջակիցներ, «Հայաստան» դաշինքի պատգամաւորներ: Խօսքը նոյն Ռոբերտ Քոչարեանի մասին է, ով իր նախագահութեան տարիներին ասում էր, թէ Ստրասբուրգը մեզ համար պոլիտերլոօ չէ: Նաեւ նոյն

Քոչարեանի, ում օրօք 2003 թուականի նախագահական ընտրութիւններից առաջ եւ յետոյ կոտորում էին ընդդիմադիր կուսակցութիւնների գրասենեակների դռներ, ոստիկանները մահակներով ծեծում էին քաղաքացիներին, հետապնդում, բռնում եւ խոշտանգում թուրքիկ բաժանող երիտասարդներին: 2008 թուականի Մարտի 1-ին էլ յաջողութեամբ «մաքրեց» «Թատերական հրապարակը» ցուցարարներից, ինչը հանգեցրեց 10 մարդու սպանութեան եւ տասնեակ վիրավորների:

ԵՄ դեսպանատան դիմացի ակցիայի մասնակիցներից էր Քոչարեանի աջակից Ռուբէն Մելիքեանը, ով 2007-2012 թուականներին աշխատում էր ՀՀ վճռաբեկ դատարանում՝ նախ օրպէս դատաւորի խորհրդական, ապա՝ օրպէս դատարանի նախագահի խորհրդական: 2012 թուականին նա ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակուեց ՀՀ արդարադատութեան նախարար: Այնուհետ մօտ երեք տարի՝ 2013-2016 թթ., Մելիքեանը եղել է ՀՀ արդարադատութեան ակադեմիայի ղեկավար: 2016 թուականի Մայիսի 5-ից մինչեւ 2018 թ. Սեպտեմբերի 26-ը ստանձնել է ԼՂՀ Մարդու իրաւունքների պաշտպանի պաշտօնը:

Մելիքեանը, ով հիմա խօսում

է Հայաստանում առկայ քաղբանտարկեալներից եւ դժգոհում ԵՄ-ից, որ վերջիններս հերիք չէ, որ նման բան չեն արձանագրում, մի բան էլ բարձր են գնահատում Հայաստանում ժողովրդավարութեան մակարդակը, հաւանաբար մոռացել է, որ Մարտի 1-ի ժամանակ եւ դրանից յետոյ, երբ ինքը աշխատում էր վճռաբեկ դատարանում, Հայաստանում քաղաքական հետապնդումների իսկական բուժ էր: »Մարտի 1«-ի գործով դատարանները աշխատում էին արտակարգ ռեժիմով՝ կայացնելով յստակ քաղաքական վճիռներ, որոնք յետոյ բողոքարկում էին ՄԻԵԴ-ում: Մի շարք գործիչներ դատապարտուեցին ազատագրկման, քաղհասարակութեան մի շարք անդամներ էլ ստանձառն տեղադրելու եւ խաղաղ քաղաքական կրակելու համար դատապարտուեցին անհամաչափ պատժաչափերով: Ռուբէն Մելիքեանը ոչ միայն այդ ժամանակ, այլեւ դրանից յետոյ, երբ արդարադատութեան նախարարութեան բարձր պաշտօնեայ էր, այդ մասին չխօսեց: Հիմա յանկարծ յիշել է «քաղբանտարկեալ» տերմինը եւ նման կարգավիճակ է շնորհում մի մարդու, ով բռնի ուժով մուտք է գործել յատուկ պահանջող տարածք, մասնակցել խուլիզանական գործողութիւնների եւ հիմա կալանաւորուել է: Ընդդիմադիր այս գործիչները հիմա Եւրոպական կառույցներին բողոքում են մի բանի համար, ինչը իրենք են արել տարիներ շարունակ:

«Civic.am»

Հայաստանը, Ցաւոք, Զուլնի Հեշտ ճանապարհ Դէպի Ձարգացում, Հետեւաբար Պէտք է Պատրաստ Լինել Անցնել Բարդն Ու Դժուարը

ՅԱԿՈՐ ԲԱՂԱԵԱՆ

Ժողովրդավարական վերափոխման գործընթացին Հայաստանի քաղաքական իշխանութեան նուիրուածութիւնն անբեկանելի է, յայտարարել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը ընդունելով Հարաւային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերի Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Տոյւօ Կլարին:

Վարչապետ Փաշինեանի եւ Կլարի հանդիպմանը քննարկուել են տնտեսական եւ քաղաքական թէ՛ երկկողմ՝ Հայաստան-ԵՄ, թէ՛ ռեգիոնալ նշանակութեան հարցեր: Ժողովրդավարութեան անբեկանելիութեան մասին յայտարարութիւնը սակայն ներկայիս ժամանակահատուածում ունի առաւել կարեւոր նշանակութիւն, ինքնին անշուշտ Հայաստանի զարգացման, ինչպէս նաեւ Հայաստան-ԵՄ յարաբերութեան սերտացման համատեքստում մշտապէս ունենալով առանցքային իմաստ եւ կարեւորութիւն:

Բանն այն է, որ ներկայումս Ուկրաինայի շուրջ գերջագեցած աշխարհաքաղաքական ճգնաժամն ու Ռուսաստան-Արեւմուտք հակադրութեան չափազանց սուր եւ լարուած իրադրութիւնը մեծ մարտահրաւէր է նաեւ Հայաստանի համար: Մի կողմում հասկանալիօրէն Ռուսաստանն է իր խնդիրներով, շահերով ու նաեւ թէ՛ մրջազգային յարաբերութիւնների, թէ՛ ժողովրդավարական գործընթացների վերաբերեալ իր պատկերացումներով, միւս կողմում Արեւմուտքը՝ քաղաքակրթական իր փա-

թեթով: Եւ երկուստէ՛ք Հայաստանի համար, Հայաստանի անվտանգութեան եւ կենսագործունէութեան համար կարեւոր նշանակութիւն եւ դեր ունեցող բեւեռներ են, որոնց փոխյարաբերութեան գերլարուած փուլում Հայաստանի գերխնդիրը նրանց հետ աշխատանքը մէկը միւսին հակադրելուց, միաժամանակ նրանց միջեւ լարուածութեան հետեւանքով մոլորելու եւ սալի արանքում մնալուց խուսափելն ու խուսանաւելն է: Եւ այս իմաստով, եթէ լինենք առաւել բաց, պէտք է արձանագրենք՝ մի կողմից Ռուսաստանի եւ Հայաստանի ու Կովկասի վրայ նրա հական ազդեցութիւնը, յատկապէս յետպատերազմեան իրողութիւնների պայմաններում, եւ միւս կողմից Հայաստանի համար դիվերսիֆիկացիայի եւ ներքին զարգացման առումով ժողովրդավարութեան խորացման նպատակը, որի առանցքային ուղղութիւնն Արեւմուտքի հետ գործընկերութիւնն է:

Այստեղ է, որ ժողովրդավարական ներքին գործընթացների անբեկանելիութիւնը կարեւոր հաւաստում է, այն իմաստով, որ Հայաստանը ժողովրդավարութիւնը դիտարկում է ոչ թէ աշխարհաքաղաքական կողմնորոշման նպատակ

կամ միջոց, այլ պարզապէս իր անվտանգութեան բարդ եւ բազմաշերտ խնդիրները լուծելու գործիք:

Հայաստանի համար ժողովրդավարութիւնը ներքին կառուցակարգերի, ներքին համակեցութեան եւ յարաբերութիւնների միջոց է, որը չի պայմանաւորում կամ որից չի բխում արտաքին վեկտորի վերանայում, հետեւաբար Հայաստանի ժողովրդավարութիւնը Ռուսաստանի սպառնալիք ներկայացնելը ըստ էութեան իրադրութեան նենգափոխում է, եւ միւս կողմից էլ Ռուսաստանի հետ Հայաստանի խոր գործընկերային յարաբերութեան հանգամանք չի բացառում ժողովրդավարական ներքին վերափոխման նպատակադրումը: Թոււմ է, որ սա շատ բարդ բանաձեւ է, փոխարէնն առաւել հեշտ է կամ Ռուսաստան կամ Արեւմուտք հարցադրումը եւ կամ հանգուցալուծումը: Մինչդեռ, հենց այդ «հեշտ» թուացող բանաձեւն է, որ Հայաստանի համար կարող է յանգեցնել չափազանց բարդ հետեւանքի, իրականում բերելով ոչ թէ լուծումներ, այլ նորանոր հետեւանքներ եւ էլ աւելի բարդացնելով լուծումները:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»


Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնոր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍԱՐՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ

ՄԱՍԻՍ  
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ  
ՎԱՐԻԶ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

44-օրեայ Պատերազմի քննիչ Յանձնաժողովին Հրահրեալներին Սեկը Պիտի Ըլլայ Վարչապետ Փաշինեանը



Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նիստը

Ազգային ժողովի պաշտպանութեան յանձնաժողովը միաձայն կողմ քուէարկեց 44-օրեայ պատերազմին հանգամանքները ուսումնասիրելու նպատակով քննիչ յանձնաժողովի աշխատակարգին:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան պիտի կանչուի 44-օրեայ պատերազմին հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողով: Այս մասին ըստ Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահի Անդրանիկ Քոչարեանը:

«Դա Նիկոլ Փաշինեանի ցանկութիւնն է, եւ ոչ միայն Նիկոլ Փաշինեանը, տեղեկ հնարաւորութիւնը մեր ընդդիմադիր գործընկերները ո՞նց իրանց ձեռքից բաց թողեցին, քանի ժամ ուզում էին, ինչ հարց ուզում էին», ըստ Անդրանիկ Քոչարեան:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեն» խմբակցութիւնները, ինչպէս նախապէս յայտարարած էին, որոշած են չմասնակցել յանձնաժողովի աշխատանքներուն: Հիմնաւորումը հետեւեալն է՝ իշխանութիւնները չեն կրնար առարկայականօրէն քննել իրենց իսկ գործողութիւնները:

Ընդդիմադիր պատգամաւորները լքեցին յանձնաժողովի դահլիճը, չբացառելով որ ինչ-որ պահի նիստերուն կրնան մասնակցել:

Դատախազութիւնը Կը Պահանջէ Երեք Անձերէ Բռնագանձել Ապօրինի Գոյքը

Գլխաւոր Դատախազութիւնը դատարանէն պահանջած է «Վսթրեչի Ապեր» մականունով յայտնի Արամ Վարդանեանէն եւ անոր հետ փոխկապակցուած 2 անձերէ յօգուտ Հայաստանի բռնագանձել ենթադրեալ ապօրինի ծագման գոյքը:

Դատախազութիւնը կը նշէ, որ մասնաւորապէս պահանջած է բռնագանձել Երեւան քաղաքին մէջ գտնուող 10 բնակարանները, բնակելի տունները, խանութը, շինութիւնները, կոտայքի եւ Տաւուշի մարզերուն մէջ գտնուող 4 հողամասերը, 2 փոխադրամիջոցները, իսկ անհնարինութեան պարագային՝ անոնց միջին շուկայական արժէքը, որ ընդհանուր կը կազմէ 870.997.100 դրամ:

Իրաւապահները ուսումնասիրած են նաեւ աւելի քան մէկ տարի առաջ մահացած, փտածութեան յանցագործութիւններու համար մե-

«Եթէ, մարդ ես, մի օր նպատակարար մար համարենք, կարող է գանք, շարունակենք մասնակցել»:

Պատգամաւորները, որպէս ի պաշտօնէ յանձնաժողովի անդամներ, նաեւ կրնան ծանօթանալ Քննիչ յանձնաժողովի որեւէ փաստաթուղթերու եւ ձայնագրութիւններու: Այստեղ ինդիք տեսաւ յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը: «Ես չհասկացայ, դուք ըստ ձեր ցանկութեան էք որոշելու ինչ-որ մի պահի մասնակցել, թէ՞ չէ: Եղպէս չի լինում», նշեց Քոչարեան:

Անդրանիկ Քոչարեան կը պնդէ, որ ընդդիմադիրներու պոչքով չի կրնար յանձնաժողովին նկատմամբ անվտանգութիւն ստեղծել, բայց դժգոհ է գործընկերներու որոշումէն, նիստին նախորդած գործընկերէն ինքը հետեւութիւն կատարած էր, թէ ընդդիմադիր պատգամաւորները կը փափաքէին մասնակցել նիստի աշխատանքներուն:

«Եթէ մեր ընդդիմադիր գործընկերները կամ Ռոպերթ Քոչարեանը թոյլ չտուեց, որպէսզի իրենք բաց ճակատով գան ու իրենց հետաքրքրող հարցերը ուղղեն ցանկացած պաշտօնեայի, ցանկացած փաստաթղթի հետ ծանօթանալու առումով, դա արդէն խօսում է, թէ ինչ որակի ընդդիմութիւն ունենք», յայտնեց նա:

դադրուող զօրավար Մանուէլ Գրիգորեանի, Հայաստանի նախկին ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանի, փոխադրութեան նախկին նախարար Գագիկ Բեկլարեանի, բնապահպանութեան նախկին նախարար Արամ Յարութիւնեանի, ԱԱԾ գնդապետ Սերոբ Յարութիւնեանի, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբոր՝ հետախուզման մէջ գտնուող Լեւոն Սարգսեանի դստեր, Ազգային ժողովի նախկին նախագահ Գալուստ Սահակեանի որդիին՝ Պետական գոյքի կառավարման վարչութեան նախկին պետ Արման Սահակեանին պատկանող գոյքն ու դրամական միջոցները: Արամ Յարութիւնեանի, Վլատիմիր Գասպարեանի, Սերոբ Յարութիւնեանի գործերը արդէն դատարանն են: Ընդհանուր առմամբ, կ'ուսումնասիրուի աւելի քան 200 գործ:

ԱԱԾ-ն Կը Չեզոքացնէ Հայաստանի Տարածքին Գործող Լրտեսական Ցանց. 19 Անձ Ձերբակալուած Է

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) կը յայտնէ, որ բացայայտած եւ չեզոքացուցած է Հայաստանի տարածքին գործող լրտեսական ցանցի գործունէութիւնը:

ԱԱԾ-ն կը մանրամասնէ՝ օտարերկրեայ յատուկ ծառայութիւններու աշխատակիցները Հայաստանի տարածքին ստեղծած են գործակալական ցանց, որու կազմին մէջ ներգրաւած են զինուած ուժերու տարբեր ստորաբաժանումներու մէջ ծառայող անձեր:

Լրտեսական գործունէութիւն իրականացուցած անձեր, ինչպէս Ծառայութիւնը կը նշէ, ընկերային ցանցերու մէջ ստեղծած են իգական սեռի ներկայացուցիչներու տուեալներով կեղծ անհատական էջեր՝ հայուհիներու տուեալներով եւ լուսանկարներով: Անկէ ետք հայերէնին ազատօրէն տիրապետող օտարերկրեայ յատուկ ծառայութիւններու ներկայացուցիչները ծանօթութիւններ հաստատած են ՀՀ զինուած ուժերու մէջ տարբեր պաշտօններ զբաղեցնող անձերու հետ, ծանօթութիւնները վերածած են մտերիմ յարաբերութիւններու, իսկ այնուհետեւ նաեւ՝ առաջարկած են գումարի դիմաց համագործակցել իրենց հետ եւ տրամադրել ռազմական բնագաւառին վերաբերող տեղեկութիւններ, մասնաւորապէս՝ Հայաստանի զինուած ուժերու տարբեր զօրամասերու տեղակայման վայրերու, անձնակազմի, զէնքի, զինամթերքի, զինուորական սարքերու քանակի եւ տեսակի, զօրամասերու եւ անոնց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջաններու, ճարտարապե-

տական կառուցներու, սարքաւորումներու եւ այլնի վերաբերեալ:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան փոխանցմամբ, նշուած եղանակով լրտեսական գործունէութիւն իրականացուցած անձեր գործակալական ցանցին մէջ ներգրաւած են շուրջ երկու տասնեակ Հայաստանի քաղաքացիներ, որոնք ի պաշտօնէ հնարաւորութիւն ունեցած են առնչուելու պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկութիւններու եւ փաստաթուղթերու հետ:

Վերոյիշեալ զինուորները գումարի դիմաց, բիջային տարբեր յաւելուածներու միջոցով, օտարերկրեայ յատուկ ծառայութիւններու ներկայացուցիչներուն մասնաւոր փոխանցած են ռազմական կամ այլ բնոյթի տեղեկութիւններ, ի վնաս Հայաստանի Հանրապետութեան կատարած են դաւաճանական գործողութիւններ, ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ցանցին մէջ ներգրաւուած ՀՀ քաղաքացիներուն ինքնութիւնները բացայայտուած են, պարզուած են փոխանցուած ռազմական եւ այլ բնոյթի տեղեկութիւններու ծաւալն ու բովանդակութիւնը, խափանուած են թշնամական գործունէութիւն իրականացնելու համար նոր տեղեկութիւններու հետագայ փոխանցումը, կը յայտնէ ԱԱԾ-ն:

Քրէական գործի նախաքննութեան ընթացքին պետական դաւաճանութիւն կատարելու մէջ անմիջականօրէն ծագած կասկածանքի հիման վրայ ձերբակալուած են ընդհանուր թիւով 19 անձ, որոնց մէկ մասը տուած է խոստովանական ցուցմունքներ:

Հրապարակուեցաւ Ռոպերթ Քոչարեանի Երեք Միլիոն Տոլար Կաշառքի Գործով Սեղադրական Եզրակացութիւնը

Դատաւարութեան մեկնարկէն զրեթէ երեք տարի անց, մեղադրող դատախազը ներկայացուց նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանի մեղադրական եզրակացութիւնը, ըստ որուն՝ ան 2008 թուականին ստացած է 3 միլիոն տոլար կաշառք:

Ըստ մեղադրող կողմին՝ 2008-ին գործարար Սիլվա Համբարձումեանը արտաքին գործերու նախկին նախարար Վարդան Օսկանեանի միջնորդութեամբ դիմած է Ռոպերթ Քոչարեանին եւ այլ պաշտօնատար անձերու՝ կաշառք առաջարկած ու գումարը մաս-մաս փոխանցած է: Նոյն գործարքի ծիրին մէջ կաշառք ստացած է նաեւ նախկին փոխվարչապետ Արմէն Գէորգեանը, որ նոյնպէս ամբաստանեալ աթոռին նստած է: Այս յօդուածով Գէորգեանին ու Քոչարեանին 7-12 տարուայ ազատազրկում կը սպառնայ:

«Ռոպերթ Քոչարեանը կաշառքի իր մասնաբաժինն առանձնապէս խոշոր չափերի՝ 927 միլիոն ՀՀ դրամին համարժէք 3 միլիոն ամերիկեան տոլար գումարը ստացել է 2008 թուականի Փետրուարին եւ Մայիսին», ըսուած է մեղադրական եզրակացութեան մէջ:

Դատախազը մօտ 15 վայրկեան ընթացքէ մեղադրանքը, որմէ յետոյ պաշտպանական կողմը յայտարարեց, որ այդ եզրակացութիւնը յստակացման, պարզաբանման կարիք ունի: «Ես իսկապէս չեմ

հասկանում մեղադրանքի էութիւնը», նիստերու դահլիճին մէջ յայտարարեց 67-ամեայ պաշտօնաթող նախագահը:

Դատաւոր Աննա Դանիբեկեանը երկրորդ նախագահին հարցուց. կ'ընդունի՞ մեղադրանքը, թէ՞ ոչ: Քոչարեանը կրկին մեղադրանքի պարզաբանում պահանջեց, որմէ յետոյ անոր պաշտպանները ի նշան բողոքի դուրս եկան դահլիճէն:

Դատաւոր Դանիբեկեանը որոշեց փաստաբաններուն նկատմամբ դատաւարական պատժամիջոց կիրառել՝ գանոնք տուգանելով 50 հազարական դրամով:

Նիստէն ետք, մեղադրող դատախազ Գէորգ Պաղտասարեանը անհասկնալի մեղադրանքի մասին Քոչարեանի պաշտպաններուն պնդումները պաշտպանական մարտավարութիւն որակեց՝ ընդգծելով, որ չհասկնալու ոչինչ կար. «Տարածուած մարտավարութիւն կայ՝ միշտ չհասկանալ, ինչքան էլ բացատրես՝ չհասկանալ»:

Սեղադրական եզրակացութեան հրապարակման պիտի յաջորդէ բուն դատաքննութիւնը՝ ապացոյցներու հետազօտումը, վկաններու հարցաքննութիւնը: Վկաններու շարքին է Ռոպերթ Քոչարեանի պաշտօնավարման տարիներուն արտաքին գործերու նախարարի պաշտօնը զբաղեցուցած Վարդան Օսկանեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Փաշինեան. «Չեմ կարողանում ճակատագրաբար ընդդիմադիրները Յայտարարում եմ 5000, 6000, 7000 Ձոռ»



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ԱԺ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազգային ժողով-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ անդրադարձաւ 44-օրեայ պատերազմի ժամանակ զոհերու թիւին մասին ընդդիմութեան յայտարարութիւններուն: «Հայաստանի կառավարութիւնը թափանցիկ կերպով եւ ֆինչական կոմիտէն պարբերաբար հրատարակում են 44-օրեայ պատերազմում զոհուած մեր եղբայրների տուեալները ու զոհերի թիւը: Գտնուելու վայրը անյայտ համարուող մեր հայրենակիցների թիւը նոյնպէս յայտնի է: Թիւերը հրատարակուած են, այսօրուայ դրութեամբ՝ 3812: Ես այդպէս էլ չեմ կարողանում հասկանալ տրամաբանութիւնը, երբ ընդդիմադիր գործիչները յայտարարում են՝ 5000, 6000, 7000 զոհ: Ես ուզում եմ հասկանալ՝ եթէ իրենք այլ տուեալ ունեն, թող հիմնաւորեն այդ տուեալը: Հակառակ դէպքում ինձ համար պարզ չէ տրամաբանութիւնը, կարող ապուր պէս է ծրագրուած եղել, չի ստացուել: Թէ՛ք իրենք համար հաճելի է, որ եւս 1000 եւ աւելի զոհ լինէր: Եւ դա իրենք համար առանձնապատուկ ինչ-որ նպատակ է: Ես ուզում եմ հասկանալ՝ էս ի՞նչ տրամաբանութիւն է: Սա շատ խօսուել փաստ է, որից պէտք է անել շատ ճշգրիտ հետեւութիւններ», ըսաւ Փաշինեան:

«Ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Հայաստանից դուրս փորձ է արւում տպաւորութիւն ստեղծել, որ նախ Հայաստանին ինչ-որ մէկը փորձում է օրակարգ պարտադրել, միւս կողմից՝ որ Հայաստանը խուսափում է ինչ-որ օրակարգից», այս մասին ԱԺ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Անոր խօսքով՝ Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելը, Թուրքիոյ հետ յարաբերութիւնները կարգաւորելը եւ համապատասխան փաստաթուղթով արձանագրելը ՀՀ կառավարութեան եւ բոլոր կառավարութիւններուն բուն նպատակը եղած է:

«Ղարաբաղի հարցի լուծման նպատակը խաղաղութեան պայմանագրի կնքումն է եղել, եւ դա արձանագրուած է եղել բոլոր փաստաթղթերում: Մենք հետաքրքր-

ուած ենք արդեօք Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելով՝ այո: Պատրաստ ենք արդեօք Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքել՝ այո: Արդեօք այդ խաղաղութեան պայմանագիրը պիտի բանակցուի՝ այո: Ի՞նչ ձեւաչափով պէտք է տեղի ունենան բանակցութիւնները, դրա մասին մեր պատկերացումները մի քանի անգամ ընդգծել ենք: Հետեւաբար, ՀՀ կառավարութեան նպատակը եւ բոլոր նախկին կառավարութիւնների օրօք էլ բանակցութեան նպատակը հէնց խաղաղութեան պայմանագիր կնքելն է եղել», ըսաւ Փաշինեան:

Վարչապետը անդրադարձաւ իր եւ Ատրպէյճանի նախագահի առջանց հանդիպման: «Քննարկուող կարեւոր հարցերից մէկը եղել է մարդասիրական հարցերի լուծումը: Այդ հանդիպումից յետոյ 8 հայ գերիներ վերադարձան հայրենիք: Եւ ես ուզում եմ նաեւ իմ գնահատանքի խօսքը հնչեցնել Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնին եւ ՅՄ Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլին՝ գործադրած ջանքերի առիթով:

Բայց հանդիպումից յետոյ այսպիսի մի թիւը ընկալում եղաւ հետեւեալի շուրջ: Մենք խօսել ենք նաեւ առաջին պատերազմում անհետ կորածների ճակատագրի մասին եւ 44-օրեայ պատերազմում անհետ կորած անձանց ճակատագրի մասին: Եւ Ատրպէյճանն անընդհատ խօսում է այն մասին, որ Ղարաբաղեան առաջին պատերազմից յետոյ իրենք ունեն շուրջ 4000 անհետ կորածներ: Բայց ես ուզում եմ ընդգծել, որ հայկական կողմը նոյնպէս ունի անհետ կորածներ՝ պաշտօնական թիւերով 777 անհետ կորածներ ունենք:

Փորձ է արւում ներկայացնել, թէ հայկական կողմը նաեւ այս հարցում ճշգրիտ քայլեր չի ձեռնարկել: Ես ուզում եմ տեղեկացնել, որ վերջին մէկ տարուայ ընթացքում Ատրպէյճանական կողմին է փոխանցուել առաջին պատերազմից անհետ կորած համարուող 108 մարդու մարմին, եթէ այս եզրը ճիշդ է օգտագործել: Եւ յառաջիկայ օրերին մենք պատրաստուած ենք եւս 2 մարմին փոխանցել», ըսաւ վարչապետ Փաշինեան:

## Գլխաւոր Դատախազութիւնը Միջոցներ Կը Ձեռնարկ Առաջը Առնելու՝ Արցախի Նախագահին Դէմ Ատրպէյճանի Քայլերուն

Ատրպէյճանի իրաւապահները մտադիր են «սեղմ ժամկէտերու մէջ ձեռքարկել» Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը: Այս մասին յայտնած է Ատրպէյճանի Գլխաւոր Դատախազութեան ֆինչական վարչութեան պետ Նեմաթ Աւագովը:

«Հետաքննութիւնը կը շարունակուի: Յարութիւնեանը, որ իրեն կը ներկայացնէ որպէս «ինքնահռչակ վարչակարգի առաջնորդ», հնարաւորինս արագ պատասխանատուութեան պիտի ենթարկուի յատուկ ծառայութիւններու վարչութիւններու եւ հետախուզական գործակալութիւններու կողմէ», յայտնած է Ատրպէյճանցի պաշտօնեան:

Ատրպէյճանական աղբիւրներու համաձայն՝ Պաքուն Յարութիւնեանը կը մեղադրէ «Կեանճայի վրայ հրթիռային յարձակման» համար:

Հայաստանի Գլխաւոր Դատախազութիւնը յայտարարած է, որ «միջոցներ են ձեռնարկուել ինթերփոլի Գլխաւոր Քարտուղարութեան միջոցով ապօրինի հետախուզման փորձերը կանխելու, հետախուզում յայտարարելու մասին հարցումներ ստանալու դէպքում դրանց ընթացք չտալու, նշուած անձանց հետախուզման վերաբերեալ տուեալները ինթերփոլի համապատասխան պահոցներում չներառելու եւ դրանց կապակցութեամբ ինթերփոլի ուղիներով որեւէ



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

համագործակցութիւն չիրականացնելու ուղղութեամբ»: Ինչպէս նշած էր գերատեսչութիւնը, հաշուի առնուած է առաջին հերթին այն հանգամանքը, որ ըստ ինթերփոլի կանոնադրութեան 3-րդ յօդուածին՝ կազմակերպութեան խստիւ կ'արգիւրուի որեւէ գործունէութիւն ծաւալել կամ միջամտել քաղաքական, զինուորական, կրօնական, ցեղապաշտական բնոյթ կրող գործերուն եւ հարցերուն:

Ղարաբաղեան 44-օրեայ պատերազմէն յետոյ, Արայիկ Յարութիւնեանը, ինչպէս հաղորդուած է, քանի մը անգամ մեկնած է արտերկիր՝ մասնաւորապէս Ռուսաստանի Դաշնութիւն:

## Հայաստանի Օրակարգին Վրայ Միութեանական Պետութեան Հարց Չկայ Ան Քարտուղար

Հայաստանի օրակարգին վրայ Միութեանական Պետութեան միանալու հարց չկայ, ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը՝ լրագրողներուն խնդրանքով անդրադառնալով Պելառուսիոյ նախագահին աղմկայարոյց յայտարարութեան:

«Եթէ նման հարց չկայ, իմ դիրքորոշումը այն է, որ Հայաստանը ինքնիշխան պետութիւն է, ժողովրդավար պետութիւն է եւ պէտք է շարունակի մնալ այդպիսին», ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը՝ յոյս յայտնելով, որ Մինսքը կը խոսափի նման միջադէպերէ եւ Հայաստանի վերաբերեալ գնահատականներէ:

«Այդ գնահատականները որեւիցէ ձեւ չեն բխում Հայաստանի եւ Պելառուսիոյ միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւններից», ըսաւ Գրիգորեան:

Ալեքսանտր Լուքաշենքօն յայտնի լրագրող Վլատիմիր Սոլովյովին տուած հարցազրոյցին ընթացքին ըսած է, որ յառաջիկայ



Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

15 տարիներուն Մոսկուայի ու Մինսքի նախաձեռնած Միութեանական Պետութեան կազմին մէջ պիտի ընդգրկուի նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններուն մեծ մասը, նշելով նաեւ Հայաստանի անունը: «Հայաստանը փախչելու տեղ չունի», ըսած է Լուքաշենքօն:

## Հայաստան Պիտի Շարունակէ Իր Ձանքերը

Շարունակուած էջ 1-էն

Արտաքին գործերու նախարարը անդրադարձաւ նաեւ տեղեկութեան, թէ Նիկոլ Փաշինեանը պէտք է մասնակցի Թուրքիոյ մէջ տեղի ունեանալիք դիւանագիտական համաժողովին: «Ուզում եմ մէկ անգամ եւս հաստատել՝ ՀՀ վարչապետի՝ Անթալիայի միջոցառման մաս-

նակցութեան հարցը չի քննարկուել եւ չի քննարկուում: Որոշակի սխալ թարգմանութեան շփոթի հետեւանք է սա: Հրաւեր ուղարկուել է իմ եւ Ռուբէն Ռուբինեանի անունով: Որոշում իսկապէս չկայ, եւ որոշումը մեծապէս կ'սխալուի կը լինի նաեւ Փետրուարի 24-ին կայանալիք Վիեննայի հանդիպման արդիւնքներից», ըսաւ Միրզոյեան:

### Երեւանը Հրատապ Կը Համարէ ԵՈՒՆԵՍԲՕ-ի Փաստահաւաք Առաքելութիւնը Հակամարտութեան Գօտի

Պաշտօնական Երեւանը 44-օրեայ պատերազմի աւարտէն չե-տոյ ԵՈՒՆԵՍԲՕ-ի գլխաւոր քար-տուղար Օտրի Ազուլէի կողմէ առա-ջարկուած՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտի փաստա-հաւաք առաքելութեան իրականա-ցումը կը համարէ առաջնահերթ եւ հրատապ:

Հայաստանի արտաքին քաղա-քական գերատեսչութիւնը կը յայ-տարարէ՝ Երեւանը կը սատարէ այս առաքելութեան հնարաւորինս արագ կեանքի կոչման՝ «գինուած հակամարտութեան դէպքում մշա-կութային արժէքների պաշտպա-նութեան մասին» 1954-ի Լահէյի Ուխտին եւ անոր կից երկու արձա-նագրութիւններուն համահունչ:

«ԵՈՒՆԵՍԲՕ-ի փաստահաւաք առաքելութեան անյապաղ իրակա-նացման անհրաժեշտութիւնն յա-ռաջացել է պատերազմի հետեւան-քով ատրպէյճանական վերահսկո-ղութեան տակ անցած տարածքնե-րում հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութիւնը ոչնչ-չացման վերահաս վտանգից պաշտ-պանելու համար: Հայկական յու-շարձանների հանդէպ արդէն իսկ արձանագրուած վանտալիզմի դէպ-քերը, ինչպէս նաեւ Ատրպէյճանի Մշակութի Նախարարութեան կող-մից օրեր առաջ հայկական պատ-մամշակութային ժառանգութեան

ինքնութիւնը խեղաթիւրելուն ուղղ-ուած աշխատանքային խմբի ստեղծ-ման ազդարարումը փաստում են, որ նման վտանգն առաւել քան իրական է», կը յայտարարէ Հայաս-տանի արտաքին քաղաքական գե-րատեսչութիւնը՝ շեշտելով, որ ԵՈՒՆԵՍԲՕ-ի պատուիրակութեան Երեւան եւ Պաքու այցելութեան առաջարկը կը դիտարկենք բացա-ռապէս ԵՈՒՆԵՍԲՕ-ի գլխաւոր քարտուղարին կողմէ առաջարկ-ուած վերոնշեալ առաքելութեան ծիրին մէջ:

Ղարաբաղեան պատերազմէն չե-տոյ տարածաշրջանի եկեղեցիներու, պատմամշակութային յուշար-ձաններու վիճակին ծանօթանալու նպատակով շատ քննարկուած է ԵՈՒՆԵՍԲՕ-ի ներկայացուցիչնե-րու այցելութեան եւ առանց սահ-մանափակումներու ազատորէն տե-ղաշարժելու հնարաւորութիւնը, բայց պաշտօնական Պաքուն համա-ձայնութիւն չէր տար:

Թէպէտ անցեալ տարուայ ամ-րան Պաքուն յայտարարեց, որ Ատր-պէյճանը պատրաստ է ընդունելու ԵՈՒՆԵՍԲՕ-ի առաքելութիւնը եւ ՄԱԿ-ի Փախստականներու հարցե-րով գերագոյն յանձնակատարի գրա-սենեակին ներկայացուցիչները, առաջօր, սակայն, ԵՈՒՆԵՍԲՕ-ի մասնագէտները տարածաշրջան չեն այցելած:

### Ծաղկածորի «Կոլտըն Փելես» Հիւրանոցը Վաճառուեցաւ 10 Միլիոն Տոլարի



Ծաղկածորի մէջ գտնուող «Կոլ-տըն Փելես» հիւրանոցային համա-լիրը օտարուած է «Փրոյեքթ Ին-վէսթ-Ինվեսթ» ընկերութեան: Այս մասին կը յայտնէ տարածքային կառավարման եւ ենթակառուցում ք-ներու նախարար Գնէլ Սանոսեանը՝ յաւելելով, որ սահմանուած էր 5 միլիառ դրամ գնային առաջարկ, որ ընկերութիւնը ներկայացուցած է, ինչպէս նաեւ յառաջիկայ 5 տար-ուայ ընթացքին լրացուցիչ 4,5 միլ-իառ ներդրումային ծրագիր:

Ըստ Սանոսեանի՝ մրցոյթին միայն մէկ յայտ ներկայացուած է: «Կոլտըն Փելես» հիւրանոցը

որպէս նուիրատուութիւն փոխանց-ուած էր պետութեան 2019-ի աշ-նան: Մաքսային Ծառայութեան նախկին ղեկավար Արմէն Աւետիս-եանին պատկանող գոյքին նուիրա-տուութիւնը կ'ենթադրէր աւելի քան 7 միլիառ դրամ գնահատուած շէնք-շինութիւնները, անոնց սպա-սարկման համար չատկացուած հո-ղամասը, ինչպէս նաեւ ներսը առ-կայ շարժական գոյքը:

Գոյքը ամրացուած էր Պետա-կան Գոյքի Կառավարման Կոմիտէ-ին՝ հետագային պետութեան կա-րիքներուն համար շահագործելու նպատակով:

### Ռուսաստան-Արեւմուտք Առճակատումը

Շարունակուած էջ 1-էն

խաձեռնողական քաղաքակա-նութիւն: Այդ ժամանակ Ամերիկե-եան հետախուզական սպասար-կութիւնները տիրապետելով տու-եալներու, որ Ռուսական զօրքե-

րը կը պատրաստուին գրաւել խրիմը, պահանջած են օրուայ նախագահ Պարաք Օպամայէն չհրապարակայնացնել այդ տե-ղեկութիւնները: Երբ Ռուսաստան առանց դիմադրութեան իր հսկո-ղութեան տակ առաւ թերակղզին,

### Հայաստանի Հետ Յարաբերութիւններու Կարգաւորումը Թուրքիոյ Պատասխանատուութիւնն Է. Կիրակոսեան



Ռիչըրտ Կիրակոսեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին

Հայ-թրքական յարաբերու-թիւններու կարգաւորման գոր-ծընթացի արդիւնքին բեռը, փոր-ձութիւնը եւ մարտահրաւէրը ին-կած է միայն թրքական կողմին վրայ, ըսաւ «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց Տարածաշր-ջանային Հետազոտութիւններու Կեդրոնի տնօրէն Ռիչըրտ Կիրա-կոսեանը՝ շեշտելով, որ հայ-թրքական գործընթացը Թուրք-իոյ տապալած քաղաքականու-թիւնն էր:

Թուրքիոյ քաղաքականու-թիւնն էր՝ մերժել դիւանագիտա-կան յարաբերութիւնները եւ պա-հել փակ սահմանը, որ չբերաւ որեւէ զիջումներու Հայաստանի կողմէ, ըսաւ Կիրակոսեան՝ նկատե-լով, որ Հայաստանը առանց նախա-պայմաններու քաղաքականութիւն կը վարէ, պատասխանատուութեան բեռը Թուրքիոյ վրայ է՝ ապացու-ցելու իր անկեղծութիւնը:

«Եթէ նրանք վերջին պահին յառաջ քաշեն որեւէ նախապայ-ման, կամ եթէ Ատրպէյճանը փոխի

իր դիրքորոշումը, Հայաստանը չէ որ պիտի տուժի, դա կը լինի Թուրքիայի դիւանագիտական հնա-րաւորութեան աւարտը», ըսաւ վեր-լուծաբանը:

Հարցին, թէ օրինակ, հայ-թրքական սահմանի բացումը, իրա-տեսակա՞ն ակնկալիք է, Կիրակոսե-ան պատասխանեց՝ դա ոչ միայն իրատեսակական է, այլ նուազագոյն ակնկալիքն է:

«Այլ կերպ ասած, Թուրքիան Հայաստանի հարեւանն է, դուր է գալիս դա մեզ, թէ ոչ: Սահմանի բացումը եւ դիւանագիտական յա-րաբերութիւնների հաստատումը այն պարզ նուազագոյնն է, որ երկու հարեւաններ կարող են ունե-նալ: Սա Թուրքիայի համար պար-գեւատում չէ կարգաւորում իրա-կանացնելու համար, ոչ էլ Հայաս-տանի պարտութիւնը, սա հիմնա-կան նուազագոյնն է: Այս ծիրին մէջ յարաբերութիւնների կարգա-ւորումը հաշտեցում չէ, ոչ էլ պէտք է դիտարկուի որպէս որեւէ տեսակի մերձեցում, սա մեկնարկային կէտն է», ըսաւ վերլուծաբանը:

Արեւմուտքը ստիպուած եղաւ հաշտուիլ կատարուած իրողու-թեան հետ: Նոյն շրջանակները կը պնդեն, որ այս անգամ Սպի-տակ Տունը ցոյց կու տայ տար-բեր մօտեցում եւ տնտեսական խիստ պատժամիջոցներու մա-սին սպառնալիքներու միջոցաւ կը փորձէ ստիպել նախագահ Փու-թինին ետ կանգնելու իր ծրա-գիրներէն:

Պատերազմական իրավիճա-կը եւ յատկապէս անոր հետեւելիք տնտեսական պատժամիջոցները անմիջական ազդեցութիւնը պի-տի ունեան ցաւեւ Հայաստանի վրայ, որուն տնտեսութիւնը մե-ծապէս կախեալ է Ռուսաստանէ: Հազարաւոր հայաստանցիներ աշ-խատանքի կը մեկնին դէպի Ռու-սաստան եւ իրենց վաստակած գումարները կ'ուղարկեն իրենց հարազատներուն: Տնտեսական որեւէ ցնցում անկասկած իր ազ-դեցութիւնը պիտի ունենայ Ռու-սաստանի աշխատանքային շու-կային վրայ: Իսկ Ռուսական դրա-մատուները դուրս հանելով մի-ջազգային ֆինանսական համա-կարգէն, մեծապէս պիտի տուժեն ցաւեւ Հայաստանէն դրամատու-ները, որոնք կը նկատուին երկրի

տնտեսութեան ամենէն կայուն հատուածը:

Նախատեսուող պատժամի-ջոցներու շարքին են ցաւեւ Ռու-սական բնական կազը դէպի Եւ-րոպա փոխադրող խողովակաշա-րի շինարարութեան կասեցումը: Եւրոպական երկիրները արդէն իսկ սկսած են կազի մատակա-րարման նոր միջոցներ փնտռել: Տազմապի յառաջացումէն ետք Ատրպէյճանական կազը սկսած է դառնալ այլընտրանքային աղ-բիւրներէն մէկը Եւրոպայի հա-մար: Արեւմտեան երկիրներու կախուածութիւնը Ատրպէյճանա-կան կազէն, կը վնասէ Հայաստա-նի ազգային եւ աշխարհաքաղա-քական շահերուն:

Ռազմական որեւէ բռնկումի կայծերը կրնան հասնիլ մինչեւ կովկասեան տարածաշրջան՝ իրենց անկանխատեսելի հետե-ւանքներով: Իրավիճակի մեղմա-ցումը նպաստաւոր է Հայաստա-նի համար, որ կը փորձէ լաւ եւ հաւասարակշռուած յարաբերու-թիւններ վարել եւ Ռուսաստանի եւ Արեւմտեան երկիրներուն հետ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

# Գալիֆորնիայի Օրենսդիր Մարմինը Բանաձև Ընդունեց՝ Գալիֆորնիայի Եւ Սիւնիքի Մարզը Քոյր Նահանգ/Մարզ Հաստատելով



Փետրուարի 10-ին Գալիֆորնիայի նահանգային Սենատը ընդունեց Քրիս Հոլտընի հեղինակած՝ ACR 105 բանաձևը, որով Գալիֆորնիա նահանգի եւ Սիւնիքի մարզի միջեւ հաստատուեցան քոյր նահանգ/մարզ յարաբերութիւններ: 2021 թուականի Սեպտեմբերի 2-ին այն ընդունուած էր Գալիֆորնիայի Ասամպլի մէջ:

Բանաձևին մէջ կը նշուի, որ Գալիֆորնիա նահանգի ժողովուրդի անունով այս փաստաթղթով Հայաստանի Սիւնիքի մարզի բնակիչներուն կ'առաջարկուի այս պահէն սկսեալ մինչեւ 2026 թուականի Յունուարի 1-ը ծաւալած է փոխշահաւէտ յարաբերութիւններ՝ կրթական, տնտեսական եւ մշակութային փոխանակումները խրախուսելու եւ դիւրացնելու նպատակով: Փաստաթուղթին մէջ կը նշուի, որ Գալիֆորնիայի օրէնսդիր մարմնի նպատակն է Սիւնիքի մարզի հետ քոյր նահանգ/մարզ պետական յարաբերութիւններու միջոցով նպաստել երկու վարչական միաւորներու միջեւ յարաբերութիւններու խորացմանը:

Բանաձևի ընդունումը հնարաւորութիւն կը ստեղծէ բացառապէս երկու վարչական միաւորներու միջեւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտները, կ'ուրուագծէ հնարաւոր գործակցութեան ուղղութիւնները պետական եւ մասնաւոր դաշտերուն մէջ: ACR 105 բանաձևի համաձայն՝ կը ստեղծուի գործակցութիւնը համակարգող աշխատանքային խումբ, որու մէջ կը ներգրաւուին Սիւնիքի եւ Գալիֆորնիայի ղեկավար մարմիններու եւ հանրութեան ներկայացուցիչներ:

«Այս բանաձևը կը վերահաստատէ Գալիֆորնիայի համերաշխութիւնը Հայաստանի եւ մեր 1 միլիոնանոց գալիֆորնահայ համայնքի հետ», - ըսաւ նահանգային Ասամպլի անդամ, բանաձև-

ւի հեղինակ Քրիս Հոլտընը:

«Ստեղծելով այս քոյր-նահանգ յարաբերութիւնները Սիւնիքի մարզի հետ՝ մենք մեր աւանդը կը ներդնենք, թէկուզ փոքր, կիսելու այստեղ ապրելու որոշ տնտեսական, կրթական եւ մշակութային օգուտները, փոխգործակցութեան եւ ներգրաւուածութեան միջոցով այստեղ՝ Գալիֆորնիայի մէջ ապրելու որոշ առաւելութիւններով կիսուելու համար», - ըսաւ բանաձևի համահեղինակ, ACR 105 Գալիֆորնիայի նահանգային Ասամպլի անդամ Ադրին Նազարեանը:

«Գալիֆորնիայի նահանգային օրէնսդիր մարմնի կողմէ Գալիֆորնիայի եւ Սիւնիքի միջեւ քոյր նահանգ/մարզ յարաբերութիւններու հաստատումը ամրագրող ACR 105 բանաձևի ընդունումը ռազմավարական բնոյթի անկիւնաքարային իրադարձութիւն է: Ես բարձր կը գնահատեմ Գալիֆորնիայի Ասամպլի անդամ Քրիս Հոլտընի ջանքերը այս նախաձեռնութեան առաջամարտիկը ըլլալու համար: Ես իմ երախտագիտութիւնս կը յայտնեմ նաեւ օրէնսդիր Ադրին Նազարեանին եւ բոլոր նահանգային սենատորներուն ու ներքոյ պալատի անդամներուն, որոնք իրականութիւն դարձուցին այս նախաձեռնութիւնը: Ես նաեւ խորին գնահատանքիս խօսքս կ'ուզեմ ուղղել Արեւմտեան ԱՄՆ-ի Հայ Դատի Յանձնախումբին եւ Ամերիկայի Հայկական Համագործակցութեան Կառուցին՝ այս ուղղութեամբ իրենց անխնայ ջանքերուն համար», յայտարարած է Լոս Անձելոսի ՀՀ գլխաւոր հիւպատոս, արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Բայբուրդեան:

## Փաշինեան Եւ Քլար Բննարկած Են

Շարունակուած էջ 1-էն

ու Ֆրանսայի նախագահին միջնորդութեամբ կայացած հանդիպումներուն, ինչպէս նաեւ Փետրուար 4-ի քառակողմ տեսաժողովին արդիւնքներուն ու ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն իրականացման վերաբերեալ:

Կարեւորուած է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան գոտի ԵՈՒՆԵՍԿՕ-ի առաքելութեան ու միջազգային մարդասիրական կազմակերպութիւններու մուտքի ապահովումը՝ հաշուի առնելով հայկա-

կան մշակութային ժառանգութեան նկատմամբ ատրպէյճանական կողմէ հնչեցուող սպառնալից յայտարարութիւններն ու արդէն իսկ հայկական շարք մը կոթողներու ոչնչացման ուղղութեամբ իրականացուած քայլերը:

Ընդգծուած է նաեւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան տեւական կարգաւորման ուղղութեամբ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախարհային գործընթացի լիարժէք գործարկման եւ համանախարհային գործունէութեան աշխուժացման անհրաժեշտութիւնը:

## Կարճ Լուրեր

**Սպանիա**  
Երկրի մէկ երրորդը կը տառապի երաշտէ, անձրեւներու պակասի պատճառով եւ կլիմայական փոփոխութիւններու հետեւանքով, գիւղատնտեսութիւնը մեծապէս տուժած է:  
\*\*\*

**Ֆրանսա**  
Էմմանուէլ Մազրոն տակաւին չէ որոշած իր թեկնածութիւնը առաջարկելու հանրապետութեան նախագահի յառաջիկայ ընտրութիւններուն:  
\*\*\*

**Գանատա**  
Ոստիկանութիւնը կրցաւ առաջին անգամ ԱՄՆ-ի հետ սահմանամերձ ճանապարհը փակել փորձող բեռնատար վարորդներու ցոյցերուն: Այդ ճանապարհը բացուեցաւ բունի ոյժով եւ ձերբակալութիւններով:  
\*\*\*

**Հարաւային Գալիֆորնիա**  
Հարաւային Գալիֆորնիոյ մէջ վառելանիւթի սակերը աստիճանական ուստում արձանագրեցին յատկապէս վերջին մէկ ամսուան ընթացքին:  
\*\*\*

**Ամերիկա**  
Ամերիկա կրկին կոչ ուղղեց Թուրքիոյ, որպէսզի յարգէ մամուլի ազատութիւնը եւ յայտնեց իր մտահոգութիւնը այդ կապակցութեամբ:  
\*\*\*

**Թուրքիա**  
Թուրքիա հանրապետութեան նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան Արաբական Միացեալ Էմիրութիւններ կ'այցելէ, բարելաւելու համար իր երկրի յարաբերութիւնները այդ շրջանին հետ: Այս առթիւ պիտի ստորագրուի 12 համաձայնագրեր, նոր թափ տալով երկու երկիրներու համագործակցութեան:  
\*\*\*

**Աֆղանիստան**  
ԱՄՆ-ի կողմէ Աֆղանիստան հարստութիւնները (դրամական) ստուգելու մեծ վնաս պատճառած է երկրի տնտեսութեան, ինչպէս նաեւ աֆղան-ռուս տնտեսական յարաբերութեանց:  
\*\*\*

**Իրան**  
Ռուսաստանի հետ կը շարունակէ իր գործակցութիւնը հիւլէական ծրագրի իրագործումին համար:  
\*\*\*

**Ռուսիա**  
Օրական քրոնա համավարակէն ազդուած պարագաներուն թիւը հասած է 180,455: Յարգ վարակուածներու ընդհանուր թիւն է 14 միլիոն 313,000: Միայն Մոսկուայի մէջ օրական կը վարակուի շուրջ 13,000 հոգի:  
\*\*\*

**Իտալիա**  
Առաջին ընտանիքը, որ վարձակալուեց մեր բնակարանից ներս, Եգիպտոսից ներգաղթած Սիրան Աբգարեանի ընտանիքն էր: Սիրանը մայրիկիս մանկութեան ընկերուհին էր: Նա էր փրկել մօրս՝ Պոլիսի որբանոցում եղած ժամանակ, երբ մայրիկիս հայ լինելն ապացուցել էր նրա ձախ ձեռքի դաստակի ներսի մասում դաշուած խաչի շնորհիւ: Այդ հանգամանքն էլ դարձել էր որոշիչ, որպէսզի ամերիկահայ բարեգործ տիկինը կարողանայ մայրիկիս խել թուրքերի ձեռքից:

Մի երեկոյ թակում են մեր տան դուռը:

Հենրիկ, տղաս, տես ո՞վ է, ասում է մայրս:

Բացում եմ դուռը եւ տեսնում երկու անծանօթ դէմք:

Տղա՛ս, դու ո՞վ կըլլաս, աս վէրժինին տո՛ւնն է, հարցնում է գրեթէ մայրիկիս տարիքի բարետես կինը:

Մամա՛, քեզ են ուզում, կանչում եմ մօրս:

Մայրիկս մօտենում է դրանը եւ տեղում քարանում: Զգում եմ, որ շուտաւարձ է, ուզում է ինչ որ բան յիշել, բայց տեղը չի բերում: Օգնում է անծանօթ կինը:

Վերժին... ես եմ, ե՛ս, Սիրանը, չե՞ս յիշեր...

Օ՛... Աստուած իմ, Սիրան դո՛ւն ես..., ինչպէ՛ս, ո՛ւր տեղէն..., աչքերուս չեմ հաւատար..., դո՛ւք ալ, մի տեսակ ափսոսանք արտայայտող հնչերանգ դնելով հարցի մէջ, չսպասելով պատասխանի՝ գրկեց ընկերուհուն:

Իսկ պարո՞ւր ով է, չի ներկայացուցիր:

Պարոնը մօրեղբօրս տղան է: Յովհաննէս է անունը..., շիտակը, Հայաստան գալէն առաջ որոշեցինք ամուսնական կապով միանալ իրարու, մի տեսակ վախուրած, գլխահակ դիրքով ասաց Սիրանը:

Մինչ այդ, լուծթիւն պահած հայրս մտաւ գրոյցի մէջ, մօրս նման՝ արեւմտահայերէնով:

Կարծեմ թէ, ես ալ պարտաւորուած եմ գիտ ներկայացնել, աչքս չէ՞...: Ես Յակոբն եմ: Վերժինին ամուսինը

Գիտե՛նք, գիտե՛նք, ոգեւորուած արձագանգեց Սիրանը եւ մի ամբողջ իրական պատմութիւն պատմեց:

Հայաստան գալէն առաջ, ես նամակ գրած էի Ֆրանսա, Փարիզ, Դպրոցատէր Տիկնանց վարժարան: Ես գիտէի, որ վէրժինը հոն ուսանած է: Հունաստանի որբանոցէն ելլալէն ետք, որպէս առաջադէմ աշակերտուհի, իրեն Ֆրանսա դրկած էին:

է, լա՛ւ, Յակոբին մասին ի՞նչպէս գիտցար, հարցրեց մայրս. Ի՞նչպէ՛ս՝ ըսեմ, դուք ալ մտիկ ըրէք: Վարժարանին տնօրէնուհին ըսաւ որ, վարժարանը աւարտելէն ետք ամուսնացեր ես Յակոբ անու-

նով, վենետիկ ուսանած գիտուն երիտասարդի մը հետ եւ 36ին փոխադրուած Հայաստան:

Շատ կ'երկարես կոր Սիրան, քիչ մը արագ պատմէ, ընդհատեց ամուսինը:

Յակոբ, մի խանգարէր հաճի՛ս: Տնօրէնուհին ըսաւ, որ պատերազմէն առաջ պարոն Յակոբը Համալսարանին մէջ աշխատած է, բայց պատերազմէն ետք ուր է, ինչ կ'ընէ՞՞գաղափար չունի:

Մենք միայն երկու ամիս է, որ Հայաստան կը գտնուինք, շարունակում է ամուսինը: Մեզի դրկեցին Հոկտեմբերեան կ'ըսեն, իշտ գիւղի պէս տեղ մը: Մենք ըսինք, որ Երեւան կ'ուզենք հաստատուիլ, ինչպէս որ նախապէս որոշուած էր: Ի պատասխան մեր բողոքներուն, մեզի ըսին, որ մեր միջոցներով կրնանք տեղափոխուիլ Երեւան եւ մեր դրամով ուր որ ուզենք կրնանք հաստատուիլ:

Մենք ալ նպատակ դրինք ի գին ամէն գոհողութեան, շարունակում է Սիրանը, տեղափոխուիլ Երեւան, յուսալով որ ձեր մասին մեր ունեցած կցկտուր տեղեկութիւններով կը կարենանք գտնալ Ձեզի, որովհետեւ Ձեզմէ գատ խորհրդատու մէկը չունինք, որպէսզի մեզի ճամբայ ցցընէ այս քաղաքին մէջ:

Այդ ամէնը հասկնալի է, մեր հասցէն, մեր տո՛ւնը ինչպէս գտաք, մայրս էր հարցընողը:

Այսօր, առտու կանուխ, շարունակում է Սիրանը, Լենինականէն եկող թուրք (գնացք) առինք եւ ժամը ութին մօտերքը Երեւան հասանք: Ասոր, անոր հարց ու փորձ ընելէ ետք, Համալսարան գացինք: Հոն ըսին, որ պարոն Անասեան իրենց քով չ'աշխատիր: Խորհուրդ տուին Ակադեմիա երթալ:

Գացինք Ակադեմիա, շարունակում է Յովհաննէսը, Անասեան մեր կաճառին մէջ չ'աշխատիր, ըսաւ քարտուղարուհին:

է՛, յետո՞յ, զգալի անհանգստութեամբ խօսակցին ընդհատեց հայրիկս:

Ըսինք, բացատրեցինք, թէ ինչու կը փնտռենք Անասեան ընտանիքը՝ օգուտ չըրաւ: Հագիւ դուրս ելած էինք սենեակէն, երբ մեր ետեւէն լսեցինք նոյն օրիորդին ձայնը. «սպասէ՛ք, մի ըրպէս սպասէ՛ք»: Հոսանաբար խիղճ արթնացած էր հոգևոյն մէջ:

Ես գիտեմ թէ ինչպէս կրնաք գտնալ Անասեանի բնակարանը, ըսաւ աղջիկը, գացէք Արաբկիր, հոն կան փայտէ շինուած եօթ երկյարկանի շէնքեր՝ յատկապէս շինուած ֆրանսահայերու համար: Աղոնցմէ մէկուն մէջ ալ Անասեան ընտանիքը տեղաւորուած է:

Անկէ վերջ, իմացանք, որ 39ին ելած էք այդ շէնքէն եւ տուն շինած էք 19րդ փողոցին վրայ, եւ հարցուփորձ ընելով գտանք ձեր տունը, եւ հիմա, ինչպէս կը տեսնաք՝ հոս ենք:

Ըսել է բաւականին հոգնած էք, ասաց մայրիկս:

Շիտակը՝ այ՛ր, ասաց Սիրանը: Նայեցէք, արդէն գիշերուան ժամը տասը կըլլայ ԿՈՐ, եւ մենք առտուն ութին ոտքի վրայ ենք:

Հիմա ի՞նչ է ձեր նպատակը, հոս, Երեւան կ'ուզէք փոխադրուիլ:

Այ՛ր, սիրելի վերժին, սիրելի

քոյրիկս, մենք չենք կրնար այդ խուլ տեղը ապրիլ: Եւ յետոյ, իմ մասնագիտութիւնս հոն չ'անցնիր, ես ռենգէնի մասնագէտ եմ, հոն ի՞նչ կրնամ ընել: Երեւանի մէջ շատ արագ գործ կը գտնամ: Մինչ այդ, մենք միջոց ունինք, հոգ մի ընէր, ահագին ծախու ապրանք բերած ենք: Ձեզի կրնանք վստահիլ..., քիչմիչ ոսկի ալ ունինք: Ատկէ գատ, Կիրակի օրերուն ալ ամուսինս շուկայ կ'երթայ եւ ծախու կը հանէ մաս մը մեր բերած ապրանքներէն:

Ամէն ինչ պարզ է մնացեալը ձգենք վաղուան: Այս գիշեր դուք հոս կը մնաք, այս ժամուն տեղ մը չէք կրնար երթալ, առարկութիւն չ'վերցնող տնով ասաց մայրս:

Այդ գիշեր ծնողներս տեղափոխուեցին մեր սենեակ: Նրանք փորձում էին մեղմ խօսել, բայց միեւնոյնն է, ես էլ, եղբայրս էլ չէինք կարողանում քնել ու լսում էինք նրանց խօսակցութիւնը:

Յակոբ, ի՞նչ է սատու՞մ, մեր մի սենեակը վարձու չտա՞նք Սիրանէնց: Երկուսս էլ աշխատանք չունենք:

Եթէ մի քանի օրուայ համար լինի՛ խնդիր չէ, մի կերպ ետլայ կը գնանք: Իսկ եթէ երկար տեւի՛ ի՞նչ ենք անելու:

Յակոբ ջան, մի վախենայ, օրեր են, կ'անցնեն կը գնան, ինչպէս միշտ, լաւատեսութեամբ աւարտեց իր «ելոյթը» իմ չքնաղ մայրիկը:

Առաւօտեան բաւականին ուշ զարթնեցին մեր հիւրերը: Մինչ այդ, չգիտեմ ինչ ճանապարհով մայրիկս կարողացել էր հացբան ճարել ու նախաճաշի հնարաւորութիւն ստեղծել, որից յետոյ շարունակուեց նախորդ օրուայ գրոյցը:

Վէրժին, ըսէ սիրելիս, ի՞նչ կրնանք ընել, ի՞նչպէս կրնանք տուն մը գտնալ այս շրջանի մէջ, որպէսզի ձեզի ալ մօտիկ ըլլանք:

Ի՞նչ ըսեմ Սիրան, մէկերկու օրուան ընթացքին դժուար պիտի ըլլայ տուն մը գտնալը: Եթէ կ'ուզէք՝ կրնանք ձեզի տրամադրել մեր սենեակներէն մին՝ մինչեւ որ տուն մը գտնանք:

Շիտակը, ես պիտի խնդրէի, որ քանի մը օրուան համար մեզի հիւրընկալէք ձեր տունին մէջ, բայց կը քաշուէի:

Ինչպէս կը տեսնաս քոյրս, մենք երկու սենեակ ունինք միայն, ան երրորդը Յակոբին գրադարանն է, աշխատասենեակը: Որոշ ժամանակի մը համար մենք կը տեղաւորուինք մէկ սենեակի մէջ, իսկ այն սենեակը, որ դուք այս գիշեր անցուցիք, կրնանք ձեզի տրամադրել:

Շատ շնորհակալ ենք վէրժին, անչափ ուրախ եմ եւ երջանիկ, որ այսքան տարիներէ վերջ իրարու գտանք եւ հիմա դո՛ւն է որ օգտակար կ'ըլլաս մեզի:

... Երկու օր անց ահաւոր մի հոնդիւնով մեր տանը մօտեցաւ պատերազմի տարիներից մնացած մի բեռնատար մեքենայ՝ վրան լիքը ապրանքներ, որոնց վրայ էլ մի կերպ տեղաւորուել էին Սիրանն ու իր ամուսինը: Վարորդի կողքին էին Սիրանի մայրը՝ տիկին Աստղիկը եւ քոյրը՝ Քնարիկը:

Մեքենան յայտնուելուն պէս, թաղի բոլոր երեխաները հաւաքուեցին «թամաշի»: Աւելի տարիքոտները սկսեցին ինքնակամ ձեռք մեկնել իրերը տեղափոխելու համար: Այդ ու ձախից կարելի էր լսել:

Պոլսեցի Յակոբի տունը Ախպարներ են եկել (մինչեւ 1946 թ. ներգաղթածները Հայաստանում յորջորջուած էին որպէս պոլսեցիներ, այդ յետոյ էր, որ բոլորը դարձան ԱխՊԱՆՆԵՐ):

Սիրանի ընտանիքը մի կերպ խցկուեց հագիւ քսան քառակուսի մեթր սենեակի մէջ: Է՛լ գորգեր, մեծ ու փոքր, արեւելքին յատուկ պղնձեայ, արծաթեայ հիանալի սպասքներ, ինչ որ փակ տուփեր, արկղեր: Մի խօսքով՝ տան համար ամէն անհրաժեշտ առարկաներ:

Մենք մեր սենեակին մէջ նաւթավառ մը կը դնենք, ասաց մայրս, խոհանոցը կրնաք ձերինը սեպել: Ինչպէս տեսաք, հոստեղի տունները ջուր չունին, ծորակ-մորակ գոյու-թիւն չունի: Զուրը կը բերենք փողոցին վերը գտնուող աղբիւրէն, պետքարան (գուգարան) ալ դուրան է, այգիին ծայրը: Կարծեմ այլ հարց չմնաց:

Ձէ՛, վէրժին մնաց, առարկեց հայրս, որպէսզի ամէն անգամ սենեակին մէջէն երթալ-գալով մեր իններուն անհանգիստ չընենք, տունին քովի պատին մէջ փայտէ դուռ մը կը դնենք եւ բակին կողմէն կու գանք մեր սենեակը:

Ի՞նչ լաւ գաղափար Յակոբիկս, ապրիս: Քանի որ մենք խոհանոցը պիտի չ'օգտագործենք, մեր ինները կրնան խոհանոցին դուռը իրենց կողմէն գոցել: Այսպիսով թէ մենք եւ թէ իրենք ամբողջովին առանձին բնակարան ունեցած կ'ըլլանք:

Խոհանոցի դուռն փակուելը չ'օգնեց, որպէսզի այնտեղից դուրս չգար բուրու մնալից կերակուրների հոտը, որոնք պատրաստում էր Սիրանի մայրը: Ով գիտէ թէ տիկին Աստղիկը մեզ համար անյայտ արեւելեան ի՞նչ համեմունք-

**ՀԱՌՐՅԱԼԴԵՍ**  
**Երուանդ Ազատեանի**  
 Ազգային-Քաղաքական Յորձանուտի Մեջ  
 գիրքերուն

Կազմակերպութեամբ՝  
**ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան**

Հովհաննապոլսեամբ՝  
 Արեւմտեան Թեմի Բարեգան Առաջնորդ  
**Յովնան Արք. Տերտերեանի**

Գիրքերը կը ներկայացնէ՝  
**Տոքթ. Գրիգոր Սիմոնեան**

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 24 Փետրուար, 2022-ին,  
 Երեկոյեան ժամը 7:30-ին  
 ԹՄՄԻ ՊԷշկեթօրուեան Կեդրոնին մէջ, Ալլաթիսա:

1901 N Allen Avenue, Altadena

### Վարդանանց Հաւատամարտի Կարեւոր Յատկանիշները



#### ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Վարդանանց Պատերազմը հայ ազգի պատմութեան ամենաճակատագրական դարձակէտերէն մէկն է: Այս հաւատամարտը սկսաւ Յունիս 2, 451 թուականին: Աւարայրի ճակատամարտով եւ վերջ գտաւ 484 թուականին Նուարասակի Դաշնագիրով երբ հայ ժողովուրդը կրցաւ տիրանալ որոշ կրօնական եւ քաղաքական ազատութիւններու պարսից գերիշխանութենէն:

Իրերը իրենց պատմական շիտակ յարակցութեան մէջ դնելու համար, անհրաժեշտ է հակիրճ կերպով մատնանշել թէ՛ Հայաստան 387 թուականին բաժնուեցաւ՝ այդ ժամանակի երկու գերոյժ տէրութիւններու, Պարսկաստանի եւ Բիզանդական Կայսրութեան միջեւ: Երկրին ստուարագոյն բաժինը ինչպէս Պարսկաստանի գերիշխանութեան ներքեւ: Պարսկաստանի եւ Բիզանդական իմպերիոնի միջեւ կնքուած հարիւր տարուան դաշնագիրը, ի շարս այլոց, կ'արտօնէր հայոց Արշակունեաց թագաւորութեան՝ իր բանակը պահել երկրին ինքնապաշտպանութեան համար, ինչպէս նաեւ թոյլ կու տար որ Քրիստոնէութիւնը շարունակուի որպէս ազգային կրօն Հայաստանի մէջ:

Ի հեճուակ Հայաստանի քաղաքական աննպաստ պայմաններուն կարճ ժամանակի մը մէջ հայ ազգը կրցաւ կերտել իր գրականութեան Ոսկեդարը՝ չնորհիւ մեր Սուրբ Թարգմանիչներու հոգեմտաւոր տարերային շարժումին: Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը եւ բազմաթիւ այլ գիրքերու թարգմանութիւնները եւ դպրութեան մշակութային զարթոյնը որոշապէս սատար հանդիսացան Հայաստանի մէջ Քրիստոնէութեան գորացման, որ արդէն պետական կրօն դարձած էր 301 թուականէն ի վեր:

Պարսկաստանի ընծայած մասնակի թոյլտուութիւնը վերջ գտաւ 428 թուականին՝ հայոց Արտաշէս Դ. թագաւորին մահովը: Այդ թուականէն 10 տարի ետք, 438-ին երբ պարսից Սասանեան Կայսրութեան զահուն վրայ բարձրացաւ Յագկերտ Բ. Շահը՝ Հայաստանի քաղաքական եւ կրօնական իրավիճակը բոլորովին փոխուեցաւ: Որպէս Զրադաշտական, Յագկերտ հրահանգ արձակեց որ իր գերիշխանութեան ներքեւ գտնուող հայեր հրաժարէին իրենց Քրիստոնէական կրօնէն եւ ընդունէին պարսից Զրադաշտական կրօնը:

Հարիւր տարի Քրիստոնէական կրօնի աւիւնով սնանած եւ կէս դարու գիրով ու գրականութեամբ ունձացած հայութեան համար անհ-

նար էր ատիկա ընել: Քրիստոնէութիւնը արդէն սկսած էր գորաւոր արմատներ նետել հայութեան սրտին մէջ:

Հայ ժողովուրդի վճռակամ պատասխանը եղաւ հետեւեալը. «Այս հաւատքէն ոչ ոք կրնայ խախտել մեզ. ոչ հրեշտակները, ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր եւ ոչ ալ որեւէ դառն հարուածներ»:

Այս հաստատակամ «ոչ»ին արդիւնքը եղաւ Յագկերտ Բ.ի սպառնալիքն ու ռազմարշաւը Հայաստանի վրայ եւ հայոց արիական մաքառումը, որ պսակուեցաւ Վարդանանց հաւատամարտով: Պարսիկները Մուշկան Նիւսալուուս գորավարին հրամանատարութեամբ աւելի քան 300,000 բանակով, որուն մաս կը կազմէին փիղեր՝ յառաջացան դէպի Հայաստան: Հայոց 66,000 զինուորները, գլխաւորութեամբ Վարդան Մամիկոնեանի, յառաջ ընթացան դէպի Մակու լեռան քով Արտաւոզ դաշտը, Աւարայրի գիւղի մօտ՝ ճակատելու թշնամին դէմ: Ծակատամարտը տեւեց միայն մէկ օր հայոց բանակի պարտութեամբ: Հայերը զոհ տուին 1036 մարտիկներ՝ ներառեալ իրենց զորավար Վարդան Մամիկոնեանի: Հայոց բանակը ցրուեցաւ եւ ապա հայրուկային կոիւնները շարունակուեցան:

Աւարայրի ճակատամարտին յաջորդ տարիներուն, Յագկերտի Դեն-Շապուհ հագարապետը բաւական զուլումներու ենթարկեց հայ ժողովուրդը: Անոր կը վերագրուի Ղեւնդեանց նահատակութիւնը, երբ արիասիրտ Ղեւնդ երեց եւ այլ եկեղեցականներ անգութօրէն սպանուեցան թշնամին կողմէ:

Բաց աստի, հայ նախարարներ գերի տարուեցան Պարսկաստան եւ հոն մնացին 13 տարիներ՝ մինչեւ Յագկերտ Բ.-ի յաջորդը Պերոզ Շահը ազատ արձակեց զանոնք: 464 թուականին երբ Աւարայրի վերապրող հերոսները աքսորէն վերադարձան, Հայաստանի մէջ գտան ազգային ոգիով տոգորուած նոր սերունդ մը, որ վճռած էր Վարդան Մամիկոնեանի վսեմ առաքելութիւնը շարունակել: Ասոնց մէջ գտնուող ականաւոր դէմքերէն ոմանք Վարդան Մամիկոնեանի եղբոր՝ Հմայակի զաւակներն էին՝ Վահան, Վասակ եւ Արտաշէս Մամիկոնեանները:

Աւարայրը վեժակէտ չեղաւ Վարդանանց Պատերազմին: Յատկապէս, Վահան Մամիկոնեան շարունակեց պաշարը: Ան իր փոքր բանակով պաշարեց Արարատի լանջերուն վրայ գտնուող Ակոռի գիւղը եւ Չախլախեց հոն հաստատուած պարսիկ բանակի մէկ ջոկատը: Այնուհետեւ, երեք այլ ճակատ-

### Տեառնընդառաջի Քառասորեան Եւ Խարոյկահանդէսները

«Խոտելի է շրջիլն գիրովն, որ ի սոգիտաց է ներմուծեալ»  
ՏՕՍԱՅՈՅՑ (Երուսաղէմ 1915 էջ 24)



#### ԶԱՒԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՍԱՆԵԱՆ

##### Ի՞նչ Կապ Կայ Երկուքին Միջեւ

Ո՛չ միայն կապ չկայ երկուքին, Յիսուս Մանուկին քառասորեայ Տաճար Ընծայման եւ հրավառութեան միջեւ, այլ մանաւանդ «խոտելի է շրջիլն գիրով», այսինքն «ատելի է կրակին շուրջ պարելով», ինչպէս կը հրահանգէ Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցը, եւ խստիկ կ'արգիլէ կրակն ու շուրջպարը ու կը հրահանգէ գայն շեշտակի վերջաբան այս մէկ տողով Մեծ Տօնին արարողակարգի աւարտին, որ կը հանդիպի անշարժ կերպով Փետրուար 14-ին: Հաւատացեալ մը հարցուց թէ ուրկէ՞ այդ հեթանոսական սովորութիւնը, որուն պատասխանեցի Տօնացոյցին տուած խիստ արգելքով, թէ հրավառութիւնը «տգիտաց է ներմուծեալ», տպուած շեղագիր ու շեշտակի գիրերով:

Մանկութենէս ի վեր Քրիստոսի Տեառնընդառաջի տօնին չեմ տեսած նման հրավառութիւն, ոչ իսկ նման բան մը կը չիշեմ երբ կ'ուսանէի Դպրեվանքէն ներս: Մոմի մը բոցով Սուրբ Խորանէն վառուած կայծն էր զոր տուն կը տանէինք իբրեւ «Լոյս Աշխարհի», ինչպէս կ'ընէինք նաեւ զոյգ ձրագալոցներու երեկոյեան՝ Մննդեան եւ Զատիկին: Կարելի է, ինչպէս լսեցի անցեալ օր, «Քրիստոս Լոյս Աշխարհի» տիրաւանդ վկայութիւնը համեմատել ու արդարացնել հրավառութիւնը, որ պարզապէս անարգել կը նշանակէ Տիրոջ սուրբ ներկայութիւնը:

Ղուկաս Աւետարանիչ Սիմէոն Մերունի մարգարէութիւնն ու օրհնութիւնը կը տեղեկագրէ, թէ երբ Յիսուս Մանուկը գրկեց «այժմ ով Տէր խղաղութեամբ արձակէ քու ծառադ», կ'ըսէր, «վասնզի աչքերս տեսան քու փրկութիւնդ զոր պատրաստեցիր բոլոր ժողովուրդներ-

րուն համար»: Մերունին նաեւ «լոյս» կը կոչէ Մանուկը «որպէս յայտնութիւն հեթանոսներուն»: Այդ «լոյսը» ո՛ւր, կրակն ու շուրջպարը ուր: Հեռաւոր կապ մը չկա՞յ արդեօք կրակապաշտութեան եւ մեր օրերու այս սովորութեան միջեւ, որուն համար զոհուեցան Աւարայրի մեր հերոսները Վարդանանք եւ Ղեւնդեանք:

Կայ նաեւ ուրիշ երեւոյթ մը ծանօթ որպէս «Վալընթայնի Օր»՝ որ անշարժ կը հանդիպի նոյն Փետրուար 14-ին: Հոս եւս գայն «սիրահարներու օր»՝ հռչակելով բոլորովին կը խաթարեն Տիրոջ Տաճար Ընծայման սրբութիւնը: Մանծաղամտօրէն կրակը կը վառեն իբր թէ նոր ամուսնացեալ զոյգերուն ի պատիւ որուն վրայէն անապահով հարսը կը ցատկէ եղեր: Որքան իմաստուն եղան մեր նախնիք երբ արգիլեցին հրավառութիւնը Տեառնընդառաջի Տօնի նաւակատիքին:

Եթէ առաւելութիւն մը կայ այս անփոյթ սովորութեան մէջ, ու այդ առաւելութեան համաձայն եմ, այն ալ անպայման երիտասարդները աւելի մեծ թիւով եկեղեցի առաջնորդելն է, եւ սակայն անոնց խելքն ու միտքը հրավառութեան վրայ ըլլալով եկեղեցական պաշտամունքին հագիւ ներկայ կ'ըլլան, գայն երկրորդական նկատելով: Դրական կողմը շեշտելով կ'ուզեմ ըսել որ նորապսակ զոյգերը քաջալերել անպայման ճիշդ ուղին է Տիրոջ Ընծայման այս առիթով: Անոնք եւս եկեղեցի գալով մոմերը վառեն սուրբ խորանէն, ընկերային գեղեցիկ ճաշ ու հաճոյքը վայելեն, եւ մոմերնին վառ տուն երթան: Անհրաժեշտ է մեր եկեղեցական տօները զգուշութեամբ պահել եւ կատարել ու չխաթարել զանոնք արգիլեալ հրահանգները չկարդալով ու անտեսելով:

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages.  
Bring your family's history back to life!  
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes  
Website: [norayr.daduryan.com](http://norayr.daduryan.com)  
Email: [norayrdaduryan@gmail.com](mailto:norayrdaduryan@gmail.com)

# Արեւմտահայերէնի Ուղղագրութեան Եւ Կէտադրութեան Նուիրուած Նոր Հատոր Աը

Ամերիկայի Հայ Աւետարան-  
չական Ընկերակցութիւնը (AMAA)  
ուրախ է յայտարարելու, թէ իր  
խրախուսանքով ու հովանաւորու-  
թեամբ Հայկէպի մէջ լոյս ընծայ-  
ուեցաւ արեւմտահայերէնի ուղ-  
ղագրութեան եւ կէտադրութեան  
նուիրուած հանրամատչելի նոր ու-  
ղեցոյց մը:


Նորատիպ հատորը, որ 156 էջ  
է, կը կրէ «Գրականաշունչ պտոյտ՝  
այբուբենի տառերուն հետ» խորա-  
գիրը: Գիրքին հեղինակն է հայկ-  
պահայ ծանօթ գրող, մամլոյ աշ-  
խատակից ու կրթական մշակ պր.  
Լեւոն Շառոյեան:

Հատորը իր բնոյթով թէեւ  
գերազանցապէս քերականական  
գործ մը մը նկատուի, սակայն  
գրի առնուած է դերամատչելի  
լեզուով ու կրնայ ընթերցանու-  
թեան գիրքի մը պէս հազասահ  
կարգադրուիլ՝ իր մայրենի լեզուն  
բարելաւելու եւ անոր ուղղագրա-  
կան կանոններուն ծանօթանալու  
ցանկութիւն ունեցող ամէն տա-  
րիքի հայորդիի կողմէ: Սակայն  
անիկա մասնաւորաբար օգտակար  
պիտի ըլլայ սփիւռքահայ վար-  
ժարաններու հայերէնաւանդ ու-  
սուցիչներուն, բարձրագոյն կար-  
գերու աշակերտներուն եւ հայա-  
գիտական հիմնարկներու ուսա-  
նողներուն:

Հատորին յառաջաբանը ստո-  
րագրած է լիբանանահայ ծանօթ  
քերականագէտ տոքթ. Արմենակ  
Եղիայեան: Ան նկատել կու տայ  
որ «ներկայ հաւաքածոն առա-  
ջին ակնարկով կը թուի ըլլալ  
ուղղագրական մէկ սեղմ ուղեցոյց-  
ցը արեւմտահայերէնի ամենայն-  
ճախուած ու երբեմն անյայտա-  
հարելի թուող սխալներուն, սա-  
կայն հազիւ քանի մը էջ խորա-  
ցած՝ ընթերցողը կ'անդրադառ-  
նայ, որ ուղղագրական կարեւոր  
գիտելիք մը իւրացնելու կողքին՝  
վերահասու դարձաւ նաեւ գրա-  
կան, պատմական, մշակութային  
բազմաթիւ գիտելիքներու, որոնց  
այլապէս դժուար թէ առիթը  
ունենար այսպէս ընտրովի ու  
համատեղ հանդիպելու, եւ ան  
ամէն քայլին պիտի վարձատրուի  
գեղեցիկ գիւտով մը ու խելացի  
առաջարկով մը»:

Իսկ հատորին հեղինակը իր  
նախաբանին մէջ կը բացատրէ, թէ  
այս գործին ձեռնարկեց, որովհե-  
տեւ ուսուցչական իր երկարամեայ  
պաշտօնավարութեան ընթացքին  
մի՛շտ ցաւով կ'անդրադառնար, թէ  
հայկական երկրորդական վարժա-  
րաններու բարձրագոյն կարգերու  
չըջանաւարտութեան թեկնածու-  
ները ջախջախիչ մեծամասնու-  
թեամբ իրենց մայրենի լեզուն  
անթերի ուղղագրութեամբ գրելու  
անկարող եղած էին:

Ճիշդ այս մէկնակէտէն ճամ-  
բայ ելլելով՝ Շառոյեան ձեռնար-  
կած է սոյն աշխատասիրութեան  
պատրաստութեան: Ան հմտօրէն սե-  
ւեռու մի թարգման է հայոց այ-  
բուբենէն 21 տառեր՝ իրենց յարու-  
ցած ուղղագրական բարդութիւն-  
ներով: Այս երկու տասնեակ տա-



ուերը, զոյգ առ զոյգ վերցուած,  
այբուբենի այն գիրերն են, որոնք  
ուղղագրական համակարգին մէջ  
նմանահնչիւն են. □ բաղաձայնե-  
րէն՝ Բ-Փ, Գ-Ք, Դ-Թ, Հ-Յ, Ձ-Յ, Ձ-  
Ջ, Ռ-Ր, Վ-Ի, իսկ ձայնաւորներէն՝  
Ե-Է եւ Ո-Օ, որոնց վրայ իբրեւ 21-  
րդ տառ կ'աւելնայ «Ը» գիրը, որ  
չփոթի առարկայ կը դառնայ իր  
ստուերին՝ «սող Ը»-ին սարքած  
խաղերուն պատճառաւ...նպատակն  
է կարելի եղած չափով դարմանել  
մեր ուղղագրական սխալները եւ  
ուղիներ ցոյց տալ՝ յաղթահարելու  
համար նմանահնչիւն տառերէն  
ծնունդ առնող ուղղագրական  
դժուարութիւնները:

Նորատիպ գիրքը միայն ուղ-  
ղագրական ուղեցոյց չէ սակայն:  
Անիկա ունի երկու այլ երեսներ  
եւս:

Նախ՝ բառագիտութիւն: Հե-  
ղինակը, մասնակի կերպով, բազ-  
մաթիւ նմանահնչիւն բառերու վրայ  
հակելով իր գլուխը, կը վերծանէ  
կամ կը ստուգաբանէ զանոնք՝ ցոյց  
տալով հայերէն բառերու կազմու-  
թեան գաղտնիքները...: Ան շատ  
հետաքրքրական գիւտերու դէմ-  
յանդիման կը թողու իր ընթերցող-  
ները:

Յետոյ՝ կէտադրութիւն: Այս  
ալ ուրի՛շ խոցելի կէտ մըն է մեր  
դպրոցականներուն մօտ, որովհե-  
տեւ բաւարար չափով կամ կարե-  
ւորութեամբ չ'ուսուցուի մեր վար-  
ժարաններուն մէջ: Գիրքը շուրջ  
20 էջ յատկացուցած է հայերէնի  
կէտադրական նշաններուն, ման-  
րամասն բացատրելով իւրաքան-  
չիւր նշանի գործածութեան օրէնք-  
ներն ու ոլորտները եւ բոլորին  
համար տալով բազմաթիւ տպաւո-  
րիչ օրինակներ:

Ամերիկայի Հայ Աւետարան-  
չական Ընկերակցութիւնը, որ իր  
մէկ դարեայ պատմութեան ըն-  
թացքին մի՛շտ ու տեւաբար կանգ-  
նած է հայ դպրոցին ու հայ ուսա-  
նողին կողքին, կը հաւատայ, որ  
քերականութեան նորատիպ այս  
գիրքով նպաստած կ'ըլլայ արեւմ-  
տահայերէնի վերածաղկումին ու  
կենսունակութեան եւ օգտակար  
գործիք մը դրած կ'ըլլայ մեր  
հայախօս ու հայագիր հանրու-  
թեան ձեռքը:

# «Կայծ»ի Կայծը՝ 110 Տարի Առաջ

Շարունակուած էջ 11-էն

Հնչակեանները արտադրող դասա-  
կարգի պայքարը կը ներկայացնէ-  
ին, որպէս միակ ճամբայ/լուծում:  
Մէկ այլ օրինակ կրնամ տալ թեր-  
թի վերջին թիւերէն՝ 1914 թուա-  
կանի յօդուածէ մը: Գրութիւնը  
Պատգամաւորներու Խորհուրդի  
(Meclis-i Mebusan) երրորդ ընտ-  
րութեան մասին է: Այն ժամանակ  
վիճաբանութեան նիւթ էր հայե-  
րուն տրամադրուած բաժինը եւ  
Պատրիարքարանի միջնորդու-  
թիւնը: Թերթը կը խօսի «Իթթի-  
հատ»ականներու կողմէ միայն կազմ-  
ուած Խորհրդարանի մը վտանքի  
մասին, ու կը քննադատէ հայոց  
առաջնորդները, որոնք ընդունած  
են այդ վիճակը: Անոնք կ'առաջար-  
կեն ընտրութիւններուն չմասնակ-  
ցիլ: Թերթը կը շարունակէ ըսել,

թէ ունի քաղաքական հիմնական  
երկու սկզբունք. հայերու գոյու-  
թեան պահպանումը ու ժողովր-  
դավարական եւ օրինական պայ-  
քար՝ որպէս Օսմանեան կայսրու-  
թեան մէկ հատուածը: Համոզուած  
ըլլալով, թէ Իթթիհատականե-  
րու հակակշիռի եւ իշխանութեան  
տակ կազմուած խորհրդարանի մը  
մէջ անկարելի է այդ սկզբունքնե-  
րուն հասնիլ, հետեւաբար կ'առա-  
ջարկեն ընտրութիւններէն հեռու  
մնալ: Կը մտածէին, թէ եթէ կայս-  
րութիւնը կառավարուի միայն մէկ  
կուսակցութեան կողմէ, այդ վի-  
ճակը հարցեր պիտի ստեղծէ հա-  
յերու համար: Այս տուեալներու  
շուրջ, չենք կրնար ըսել, թէ  
Հնչակեանները իրենց քաղաքա-  
կան վերլուծումներու մէջ կը նա-  
խատեսէին 1915ը:

«ԱԿՕՍ»

# Փնտռող Գտնում Է Իր Ծամբան

Շարունակուած էջ 12-էն

Ներ էր բերել Եգիպտոսից, որոնք  
նա օգտագործում էր կերակուրնե-  
րի մէջ:

Սիրանն ու իր ամուսինը աշ-  
խատում էին: Տանը մնում էին  
տիկին Աստղիկն ու միւս աղջիկը,  
իմ աչքին բաւական տարօրինակ  
թուացող, մշտապէս լուակեաց Քնա-  
րը: Ոչ շատ լաճախ, պատահում էր,  
որ առատաձեռնութիւն հանդէս բերի  
տիկին Աստղիկը: Իրենց կողմից  
բացում էր խոհանոցի դուռը եւ  
կանչում.

Վէրժի՛ն, եկուր, եկուր սա  
պնակը Հենրիկին տուր, դպրոցէն  
հիմա եկաւ, անթի կըլլայ: Եւ դա  
արուած էր տնեցիներէրից գաղտնի,  
հակառակ դէպքում նա խիստ պար-  
սաւանքի կ'ենթարկուէր նրանց կող-  
մից:

Որոշ ժամանակ անց, մի օր,  
ուշ երեկոյեան, երբ պատրաստում  
էինք անկողին մտնել, մէկ էլ ինչ որ  
անհասկանալի աղմուկ լսուեց հա-  
րեւան սենեակից, որը գնալով հստա-  
կացաւ եւ լսելի եղան հետեւեալ  
բառերը.

Յովհաննէս բռնէ..., ատանկ  
չէ, տակէն բռնէ, տակէ՛ն, ես ոտ-  
քերուն կողմը կ'անցնիմ, դուն գլու-  
խը բռնէ...

Մենք պապանձուել մնացել  
էինք: Մայրս սկսեց հարուածել  
խոհանոցի դուռը: Մի քանի հար-  
ուած՝ եւ դուռը բացողը տիկին  
Աստղիկն էր:

Եկո՛ւր Վէրժին, ներս եկուր ...,  
շատոնց ասանկ բան չէր եղած...:  
Ի՞նչ է եղէր տիկին Աստղիկ,  
երեսնիդ գոյն չէ մնացած  
Ի՞նչ ըսեմ աղջիկս, Քնարը...,  
Քնարը ինկաւ... ինքը գինքը կորսն-  
ցուց:

Ինչո՞ւ, ինչո՞ւ ինկաւ...:  
Ի՞նչ ըսեմ Վէրժինս..., Քնարը  
հիւանդ է: Ծնած օրէն այդպէս է...,  
ամիսը քանի մը անգամ կը պատա-  
հի եւ չեն գիտեր ե՞րբ, ո՞ւր կրնայ  
պատահիլ, եւ եթէ քովը մէկը  
չըլլայ՝ կրնայ իր իսկ բերնէն ելած  
փրփուրով խեղդուիլ:

Աս ինչ սոսկալի բան ըսիք  
տիկին Աստղիկ: Մենք հասկցած  
էինք, որ Քնարը տեսակ մը տարօ-  
րինակ երեւոյթներ ունի, բնաւ չի  
խօսիլ, միշտ լուակեաց է, հայ-  
եացքն ալ՝ անորոշ:

Ալ երեւակայէ աղջիկս, թէ  
ինչե՞ր քաշած ենք այս երկար  
տարիներու ընթացքին:

Շուտով քառասուն պիտի ըլ-  
լայ: Պուաւ Սիրանիս, որ միշտ հոգ  
կը տանի քրոջը եւ գիտէ թէ ինչ  
պիտի ընէ նման պարագաներուն:

Յետագայ մէկ-երկու ամիսների  
ընթացքին Քնարի հիւանդութեան  
մասին արդէն առասպելներ էին պատ-  
մում: Ինքս մի քանի անգամ ականա-  
տես եղայ հիւանդի սարսափ ազդող  
տառապալից վիճակին:

Սիրանէնք մեր տանն ապրե-  
ցին հինգ ամիս: Ես այդպէս էլ  
չիմացայ, թէ Սիրանն իր ընտանի-  
քով օգտակար եղա՞ւ մեր ընտանի-  
քի հոգար թեթեւացնելու համար:  
Երբեւէ մեր տանը խօսք չի եղել  
այդ մասին: Բայց, որ ես փոքր  
տարիքում անչափ բարի տիկին  
Աստղիկի շնորհիւ ճաշակեցի ու  
գաղափար ունեցայ արեւելքի չքնաղ  
կերակուրների մասին՝ ընդգծուած  
փաստ է:

Յետագայում մեր չարաբե-  
րութիւնները շարունակուեցին ըն-  
կերական բարեկամական ազնիւ  
նկրտումների հիման վրայ, եւ որե-  
ւէ խոչնդոտ չեղաւ, որ խանգարեր  
մեր մտերմութեանը: Սակայն մենք  
զգում էինք, որ Սիրանի եւ Յով-  
հաննէսի ամուսնական կապը չէր  
ստացուել ու երկուսն էլ հիւանալի  
խաղում էին իրենց դէմը:

Սիրանը երկար տարիներ աշ-  
խատեց Երեւանի տարբեր հիւան-  
դանոցներում: Յովհաննէսը, որ  
մասնագիտութեամբ վարորդ էր,  
իր ամբողջ կեանքը նուիրեց Երե-  
ւանի քաղաքային երթեւեկութեա-  
նը եւ եղաւ տրոյէքուս վարողնե-  
րից ամենաշինեցից մէկը: Նա միշտ  
հպարտութեամբ ասում էր.

Իմ տրոյէքուսս կը նստին  
Սուղուկեանի անուան թատրոնի  
բոլոր դերասանները: Նա մտերիմ  
կապերի մէջ էր Աւետ Աւետիսեանի  
եւ Դաւիթ Մալեանի հետ:

Երկար չ'ապրեց Յովհաննէսը,  
սակայն մինչեւ մահանալը հասց-  
րեց 1961ին կնքահօր դէր ստանձ-  
նել ու ամուսնացնել ինձ ու Մարի-  
ետային: Նրա թաղմանը Սիրանը  
ներկայ չ'եղաւ, ոչ թէ անմեկնելի  
վշտի պատճառով, այլ, ինչպէս  
փորձում էր արդարանալ՝ «պաղ  
առած ըլլալով» պատճառով...:

Մեկնաբանութիւններն աւե-  
լորդ են: Հաւանաբար միայն ինքն  
իրեն հոգ տանելու շնորհիւ Սի-  
րանն ապրեց 102 տարի: Նա մահա-  
ցաւ աչտեղ՝ Լոս Անջելէսում 2007  
թուականին, մինչ մայրս մահացել  
էր իրենից 19 տարի առաջ:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
Massis2@earthlink.net (626) 797-7680

ՄԱՅԱԶԳ



ԱԼԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Մնեալ Հայէպ 1925

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ԱԼԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ-ի որ պատահեցաւ Յունուար 20, 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Փետրուար 28, 2022ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրները՝
Դուստրերը՝
Արշօ Յարութիւնեան
Վարդուկ Յարութիւնեան
Տէր եւ Տիկ. Սուհէլ եւ Բէթօ Տանհաշ
Անի Յարութիւնեան Նաճարեան
Թոռները՝
Տէր եւ Տիկ. Նշան եւ Մարիա Փափագեան եւ զաւակունք
Գարլա Տանհաշ եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Անուար եւ Թինա Թարապիշի եւ զաւակունք
Քոյրը՝ Ժօզէֆին Գուզուեան Այն Մալաք եւ զաւակները՝
ձորճ, Փիէլ, Ժան եւ Գարօլին (Պէյրութ)
Եղբօր տիկինը՝ Մարիթան Գուզուեան եւ զաւակունք
Եղբօր տիկինը՝ Մարի Գուզուեան եւ զաւակունք (Հայէպ)

Եւ համայն Յարութիւնեան, Գուզուեան, Այն Մալաք, Տանհաշ, Նաճարեան, Փափագեան, Թարապիշի, Մարլեան, Խոտանեան, Պօղոսեան, Մակարեան, Էքմէքճեան, Գուրումլեան, Պէրէճիզլեան եւ Զանեցեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի, Աուրապուրիւնները կը խնդրուի կատարել Կիլիկեան Բարեփառական Հաստատութեան (Guiligian Benevolent Foundation, c/o 1854 Glenwood Road, Glendale, CA 91201)

ՅԱՄԱԿՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԵԱՂՍՋԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն կազմակերպութեան վարչութեան երբեմնի անդամի ընտանեկան համայն պարագաներուն եւ մերձակորներուն, մասնաւորաբար իր կնոջ Քաթիային:

ՄԱՍԻՍ ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:
Address:
City: State: Zip Code:
Country:
Tel:
Email:

Վարդանանց Հաւատամարտ

Շարունակուած էջ 13-էն

ներու վրայ Վահան փառաւոր յաղթանակներ շահեցաւ եւ իր անունն ու համբաւը տարածուեցաւ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Պարսկաստանի մէջ:

Պերոզի յաջորդ Վաղարշ Շահը իմաստութիւնն ու հեռատեսութիւնը ունեցաւ եզրակացնելու թէ՛ անհնար էր հայերը Զրադաշտական դարձնել եւ բռնի ոյժով լուծել Հայկական Հարցը: Արդ, 484 թուականին Հեր եւ Զարեանդ գաւառի Նուարսակ գիւղին մէջ դաշինք մը կնքեց հայոց հետ հետեւեալ պայմաններով.

Ա. Կրօնական ազատութիւն շնորհել հայ ժողովուրդին.

Բ. Արգիլել մեհեաններու շինութիւնը Հայաստանի մէջ.

Գ. Իրենց կրօնը ուրացողներուն պաշտօն չտալ.

Դ. Առանց օրինաւոր դատաստանի՝ ոչ ոք պատճել:

Այսպէս, Վարդան Մամիկոնեանի եւ իր ուխտապահ հետեւորդներուն, Վարդանանց նահատակներուն, անաւարտ առաքելութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ Վահան Մամիկոնեանի եւ իր ազնուական զինակիցներուն հերոսական ջանքերով:

Բայց ի՞նչ էր մղիչ ուժը Վարդանանց հաւատամարտին: Հետեւեալ կարեւոր յատկանիշներու մէջ կարելի է ամփոփել Վարդանանց հաւատամարտին մղիչ ուժը:

Առաջին. Քրիստոնէական հաւատք: Վարդան եւ իր ուխտապահ զինակիցները Քրիստոսի նուիրուած մարդիկ էին: Անոնք ճշմարիտ քրիստոնեաներ էին: Վարդան ինք արժանաւոր շառաւիղն էր Ս. Գրիգոր Լուսաւորիչի: Ան խոր հաւատքի տէր մարդ մըն էր: Իր սրտառուչ ճարը Արտազի դաշտին վրայ Աւարայրի ճակատամարտէն առաջ՝ ապացոյց է իր քրիստոնէական անյողոզող հաւատքին: Հայոց քաջ զօրավարը կը յայտարարէր. «Երբէք չվախնանք հեթանոսներու բազմութենէն... որպէս զի ճշմարտութեան կողմը վեր բարձրանայ...արդ, եթէ մահկանացու հրամանատարին համար այդ քաջութիւնները կը գործէինք, որքան աւելի եւս պէտք է ընենք Անմահ Թագաւորին համար»:

Նոյնքան յուզիչ է Վարդանանց յայտարարութիւնը Յագիերտի. «Այս հաւատքէն ոչ ոք կրնայ խախտել մեզ...որովհետեւ մեր հաւատքի Ուխտը մարդու հետ չէ, այլ բուն իսկ Աստուծոյ հետ...որմէ կարելի չէ հեռանալ ոչ հիմա, ոչ ետքը եւ ոչ ալ յաւիտեան»:

Երկրորդ. Ազատութեան սէրը: Վարդանանց հերոսական սխրագործութեան ուրիշ մէկ մղիչ ոյժն էր ազատ ապրելու, ազատ պաշտելու եւ ազատ գործելու վճռակամութիւնը: Խղճի, կրօնքի, խօսքի ազատութիւնը յատկանիշը դարձաւ Վարդանանց մարտիկներուն:

Վարդան եւ իր սերնդակիցները կ'ուզէին ազատ ըլլալ՝ իրենց ազատ հայրենիքին մէջ եւ ազատօրէն պաշտել իրենց Աստուածը:

Հայոց պատմութեան մէջ Վարդանանց դիւցազնամարտը իրմէ առաջ եւ իրմէ ետք մղուած բոլոր պատերազմներուն խտացումն է՝ հայ ազատատենչ հոգիին արտացոլացումը: Ինչպէս հայ ազգի Հայկ նահապետը չհանդուրժեց բռնակալ Բելին, այնպէս ալ Վարդան, որպէս «այլ քաջասիրտ եւ ազատատենչ» չհանդուրժեց պարսից կողմէ հայոց անբռնաբարելի իրաւունքներու կաշկանդումին:

Երրորդ. Զոհողութեան ոգին: Աւարայրի ճակատամարտէն մինչեւ Նուարսակի Դաշնագրին ստորագրումը, 451-էն 484 տարածուող այդ 33 տարիներու ժամանակաշրջանը, կը յատկանշուի գոհողութեան ու նուիրումի բազմաթիւ դրուագներով, որոնք անբակտելիօրէն կապուած են Վարդանանց հաւատամարտին հետ: Այդ սքանչելի գոհաբերութեան օրինակներէն ո՞ր մէկը յիշենք եւ չհիանանք: Ուխտապահ նախարարներ շղթայակապ Տիգրանի բանտերուն մէջ տուայտեցան իրենց տուններուն եւ հայրենիքին կարօտովը, բայց հաւատարիմ մնացին Վարդանանց Ուխտին: «Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին» մէկդի նետեցին իրենձ պերճանքն ու հանգիստը եւ նեցուկ կեցան հայ բանակին: Հայ տղամարդիկ խիզախօրէն հաւատարիմ մնացին իրենց նուիրական Դատին եւ յանձնառու եղան ամէն տեսակ գոհողութեանց: Իսկ հայ եկեղեցականները, որոնք աքսորուած էին Պարսկաստանի անապատներուն մէջ՝ թշնամիին յորդորներուն եւ սպառնալիքներուն դէմ անդրդուելի մնացին իրենց կեանքի գնովը:

Ի տես այս տեսակ անյողոզող հաւատքի, նուիրումի, գոհաբերութեան եւ հոգեկան անպարտելի ոյժին, պարսիկ մոզպետն անգամ ճարահատ կը յայտարարէր. «Եթէ աստուածներն իսկ օգնութեան հասնին մեզի, անկարելի է որ Զրադաշտական կրօնը Հայաստանի մէջ հաստատուի, քանի որ ո՞վ կրնայ դիմադրել ժողովուրդի մը որ շղթաներէն չի վախնար, տանջանքները կ'արհամարէ եւ մահը կեանքին կը գերադասէ»: Յիրաւի, «շղթաներէն չվախեցող, տանջանքները արհամարող եւ մահը կեանքին գերադասող» ժողովուրդն էր, որ վերջի վերջոյ ծունկի պիտի բերէր գոռոզ Յակերտները, Պերոզներն ու Վաղարշները եւ ստորագրել պիտի տար Նուարսակի Դաշնագիրը:

Վերջացնելով հաստատենք այն ճշմարտութիւնը, թէ Աւարայրէն մինչեւ Նուարսակ՝ Վարդանանց սերունդը այնպիսի ոգի մը ցուցաբերեց, որ քիչ անգամ կը տեսնուի ազգերու կեանքին մէջ: Այսօր, եւ միշտ, այդ ոգին դառնալու է մեզի ներշնչման աղբիւր եւ մարտահրաւէր:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՂԻ ԸԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

### Լոս Անճելըսի «Ռամզը» Դարձաւ «Սիւփըր Պոլի» Ախոյեան



Կիրակի, փետրուար 13-ին տեղի ունեցաւ Ամերիկեան Ֆութպոլի ախոյեանութեան աւարտական՝ «Սիւփըր Պոլի» մրցումը:

Ինկլուտ քաղաքի նորակառուց «Սօֆայ» արդիական մարզադաշտին վրայ կայացած մրցումին Լոս Անճելըսի «Ռամզը» 23-20 պարտութեան մատնելով Սինսինատի «Պէնկըլզը» տիրացաւ «Սիւփըր Պոլի» բաժակին՝ առաջին ամգամ ըլլալով խումբի Լոս Անճելըսի մէջ պատմութեան ընթացքին:

1999-ին «Ռամզը» տիրացած էր «Սիւփըր Պոլի» ախոյեանութեան, սակայն այդ ժամանակ հանդէս կու գար Սան Լիսիսի մէջ:

Նախնական տուեալներով հեռատեսիլի վրայ մրցումը դիտողներու թիւը հասած է 117 միլիոնի:

### Փեքին-2022. Գեղասահքի Կարապետեան-Սենեկալ Պարային Ձոյգը Ողիմպիական Խաղերուն 18-րդն Էր



Փեքինի Ձմեռնային Ողիմպիական Խաղերուն Հայաստանը ներկայացնող թինա Կարապետեան-Սիմոն Սենեկալ գեղասահքի պարային զոյգը երկու ծրագրերու արդիւնքով գրաւեց 18-րդ դիրքը:

Ձոյգը ազատ ծրագրին մէջ ստացաւ 101.16 միաւոր, որ 16-րդ արդիւնքն էր 20 մասնակիցներու մէջ, իսկ կարճ եւ ազատ ծրագրերուն մէջ ընդհանուր հաւաքեց 167.03 միաւոր եւ գրաւեց 18-րդ տեղը:

Ոսկէ մետալակիր դարձաւ Ֆրանսայէն Գաբրիէլ Փափատաքիս-Կիյոմ Սիգերոն զոյգը: Երկրորդ տեղն գրաւեց Ռուսաստանի Ողիմպիական Կոմիտէի խումբէն Վիքթորիա Սինիցինա-Նիքիթա Կացալպով զոյգը, երրորդը ԱՄՆ-էն Մատիսըն Հապըլ-Չաքարի Տոնոհու զոյգը:

### «Չելսին» Աշխարհի Ակումբային Ախոյեան



Եւրոպական Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր Լոնտոնի «Չելսին» առաջին անգամ ըլլալով նուաճեց աշխարհի ակումբային ախոյեանի տիտղոսը:

Ապու Տապիի մէջ տեղի ունեցած եզրափակիչ խաղին գերմանացի թոմաս Տուխելի գլխաւորած խումբը լրացուցիչ ժամանակի ընթացքին

### «Ռոման» Խուսափեցաւ Պարտութենէն



Իտալիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին «Սասուոլոն» ընդունեց «Ռոմային»: Արձանագրուեցաւ 2:2 հաւասար արդիւնք:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը մարտաքաղաքային խումբի հիմնական կազմին մէջ էր եւ խաղցաւ ամբողջ հանդիպումի ընթացքին:

«Ռոման» 40 կէտով 7-րդ տեղն է եւ 2 միաւոր ետ է 6-րդ տեղը ընթացող «Լացիոյէն»: «Սասուոլոն» 12-րդն է՝ 30 միաւոր:

«Միլանը» իր սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Սամփորիայի» հետ եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Միակ կողմ 8-րդ վարկեանին նշանակեց փորթուկալացի յարձակող Ռաֆայէլ Լեաուն:

«Միլան» 55 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղը նահանջած ախոյեան «Ինթերէն», որ 1 հանդիպում նուազ կատարած է:

23-րդ հանգրուանին «Աթալանթան» Պերկամոյի մէջ հիւրընկալեց Թուրինի «Եուվեթուսին» եւ յաղթանակը կորսնցուց վերջին վարկեաններուն՝ 1:1:

«Եուվեթուսը» պարտութենէն խուսափեցաւ աւելացուած ժամանակին պրագիլցի պաշտպան Տանիլոյի նշանակած կոլին շնորհիւ:

«Եուվեթուսն» (25 խաղ) ունի 46 կէտ եւ կը գրաւէ չորրորդ դիրքը, «Աթալանթան» (24 խաղ) 44 կէտով 5-րդն է:

### «Մանչեսթըր Սիթի» Եւ «Լիվերփուլ» Յաղթական

Անգլիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» հիւրընկալուեցաւ յետնապահներէն «Նորուիչ Սիթիէն»: Կաթալոնացի Խոսեպ Կուարդիոլայի գլխաւորած խումբը յաղթեց մեծ առաւելութեամբ՝ 4:0:

«Լիվերփուլ» հիւրընկալուեցաւ «Պարնլի» կողմէ եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով: Խաղի միակ կողմ 40-րդ վարկեանին նշանակեց պրագիլցի կիսապաշտպան Ֆապինյոն:

«Մանչեսթըր Սիթին» 63 կէտով առաջատարն է, իսկ 2 հանդիպում նուազ կատարած «Լիվերփուլ» 54 միաւորով երկրորդն է:

### «Պայըրն» Անակնկալ Պարտութիւնը Կրեց՝ 2:4

Գերմանիայի առաջնութեան 22-րդ հանգրուանին ախոյեան Միւնխիի «Պայըրնը» հիւրընկալուեցաւ «Պոխումմէնն» եւ անակնկալ պարտութիւն կրեց 2:4 արդիւնքով:

Տորթմունթի «Պորուսիան» մրցակիցի դաշտին վրայ պարտութեան մատնեց «Եոնիոն Պեուլինին»՝ 3:0 արդիւնքով:

«Պայըրն» 52 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Պորուսիայէն», որ մէկ հանդիպում քիչ կատարած է:

### «Եսպանիոլ»-«Պարսելոնա» 2:2

Սպանիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին տեղի ունեցաւ կաթալոնական տերպին «Էսպանիոլի» եւ «Պարսելոնայի» մասնակցութեամբ: Արձանագրուեցաւ ոչ ոքի՝ 2:2 արդիւնք:

«Պարսելոնան» պարտութենէն խուսափեց վերջին վարկեաններուն հոլանտացի յարձակող Լիուկ Տէ Եոնկի նշանակած կոլին շնորհիւ:

«Պարսելոնան» (23 խաղ) 39 կէտով չորրորդն է: Նոյնքան միաւոր ունի 5-րդ տեղը գտնուող Մատրիտի «Աթլետիկոն» (23 խաղ):

Մատրիտի «Ռեալը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Վիլյաուալայի» հետ եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով: Խումբերը կոլ չնշանակեցին:

Արքայական ակումբը 54 միաւորով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Սեւիլիայէն»:

2:1 արդիւնքով առաւելութեան հասաւ Լիպերթատորեսի գաւաթակիր, պրագիլական «Փալմէյրասի» նկատմամբ:

«Չելսի» էն աչքի ինկան պեղծիգացի յարձակող Ռոմելու Լուկակուն եւ գերմանացի կիսապաշտպան Կայ Հափերցը:

Երրորդ տեղի համար խաղի ընթացքին Եգիպտոսի «Ալ Ահլին» 4:0 արդիւնքով յաղթեց Սէուտեան Արաբիայի «Ալ Հիլալին»: